

Խ. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀՈՒՇԵՐԻՑ

« ՀԱՅԱՍՏԱՆ »

891.987

Խ. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

✓

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀՈՒՇԵՐԻՑ

A $\frac{11}{76742}$



Սիրով նվիրում եմ կնոջս՝ Սա-
թիկին և դստերս՝ Անելայի
սպաճառ հիշատակին:

Դանիելյան Խ. Հ.

Դ Պատառիկներ հուշերից.— Եր.: Հայաստան, 1988, 59 էջ:

Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ Խ. Դանիելյանի գրքուկը հուշապատում է հայ մշակույթի նշանավոր իրադարձությունների և հասարակական գործիչների մասին, որտեղ նրբորեն՝ հանդիպումների մի քանի շտրիխներով, գծվում են գիտության ու գրականության ականավոր ներկայացուցիչների դիմապատկերները: Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Դ $\frac{4603000000}{701(01)-88}$ 132—88

ԳՄԴ 83 Դ

ISBN 5—540—00086—2

ԳԵՊԻ ԳՅՈՒՂ՝ ԳԵՊԻ ԿՅԱՆՔ

Երբ մարդ հասակն առնում է և մազերին իջնում է ճերմակը, աղատ ժամերին հաճախ է հիշում իր անցած ուղին, լավն ու վատը, ուրախն ու հաճելին, որը կինոժապավենի նման անցնում է աչքի առջևով:

Դեռ պատանի էի, նոր էի ավարտել միջնակարգ դպրոցը, երբ Լենինականի կոմերիտմիության զավկումի ուղեգրով մեկնեցի Քալինի շրջանի Մհհրիբան (այժմ՝ Կարճաղբյուր) գյուղը, որպես ուսուցիչ:

Դա 1925—26 ուսումնական տարին էր: Հեշտ է ասել մեկնեցի: Անձանոթ միջավայր, առանց աշխատանքի փորձի... Այդ գյուղը, որի բնակիչները թուրքական յաթաղանից փախած սասունցիներ էին, թառած էր Արագածի փեշերին: Ներսիս սրանչեյի մարդիկ էին, նահապետական նիստուկաց, Արագածի զուլալ աղբյուրների նման մաքուր, շիտակ, աշխատասեր ժողովուրդ, բայց միաժամանակ անդրազետ և լույսի կարոտ: Իսկ գյուղի երիտասարդությունը զբաղմունք չուներ, և այդ պատճառով, մանավանդ ձմռան ամիսներին, երբ լուրորբ քաշվում էին իրենց խրճիթները, որոնց մեծ մասը կից էր անասնադոմերին, գյուղը թաղվում էր խավարի ու լուռության մեջ: Գիշերվա անդորրը խանդարում էր միայն շնեքի հաշոցը:

Գիշերվա այդ ժամերին, ճրագի կամ մոմի աղոտ լույսի տակ, մեն-մենակ մտածում, ծրագրում էի անևիթներս և չկար մեկը, որի հետ մտերմիկ խորհրդակցեի:

Առաջին ամիսներին քնում էի դպրոցում՝ սեղանի վրա: Բայց ամիսներ անց գյուղացիներից մեկի տանը ինձ փոքրիկ անկյուն հասկացրին, որը կից էր դոմին: Բնական լույսի

թույլ, ազոտ լինելու պատճառով թերթ կամ գիրք կարդալ հր-
նարավոր չէր: Տանտերը մահճակալի փոխարեն տվեց մի քա-
նի տախտակ, ծղոտով լցված ներքնակ և բարձ: Իսկ եթե
պատահում էր, որ գավառից կամ շրջկենտրոնից մարդ էր
գալիս, քնում էինք միասին, նույն անկողնում:

Մեծ դժվարություններից մեկն էլ լողանալու հարցն էր:
Այն ժամանակ ոչ միայն գյուղում, այլև շրջկենտրոնում ան-
գամ բաղնիք չկար: Տարին մեկ կամ երկու անգամ, երբ լի-
նում էի Լենինականում, գնում էի բաղնիք: Գյուղացիները,
այդ թվում և իմ տանտերը, որի ընտանիքը բաղկացած էր
7—8 անձից, ղեպքից-ղեպք էին լողանում, այն էլ անասնա-
գոմում: Մի անգամ տանտիրուհին՝ Գոհար մայրիկն ինձ ա-
ռաց. «Տղա, լաո, մի լազան ջուր տաքացնեմ, դու լի լողկցի»:

Համաձայնվեցի: Զուրը տաքացրին, տաքանք գոմ, նստեցի
տաշտի մեջ, օճառը քսեցի գլխիս, երբ ուզում էի տաք ջուր
վերցնել, անասուններից մեկը կապվ տաք ջրով լի գուլլին և
ջուրը թափվեց: Դա եղավ իմ առաջին և վերջին «լողանալը»
գյուղում:

Այգալիսին էր ժամանակի գյուղը, բայց պետք էր աշխա-
տել, գիտեցածի մի մասը գոնե տալ մանուկներին, այդ
կարմրաթուշ, արևահար, չարաճճի և մեծ մասամբ ոտարս-
րիկ երեխաներին: Բացի դրանից, հարկավոր էր գյուղի մե-
ծահասակ աշխատավորությանը ծանոթացնել խորհրդային
իշխանության քաղաքականությանը, և նրանց հեռու պահել
նոր կարգերի հասցեին արված պրոպագանդաներից:

Իմ առաջին խնդիրը եղավ երիտասարդներից ախտիվ
ստեղծել. կամաց-կամաց շուրջս հավաքեցի մի փոքր խումբ,
որը հետագայում դարձավ բաղմամարդ և բոլորն էլ եռանդով
լի: Արդեն մենակ չէի: Ինձ հետ տարած մի քանի տասնյակ
գրքերից, մեծ մասամբ հայ գրողներից, նրանց համար ամեն
օր պատմվածքներ էի կարդում: Բաժանորդագրվեցի նաև
թերթերի, որոնք թեև անկանոն էին ստացվում, բայց դա ևս
մեծ օգնություն էր նոր լուրեր հաղորդելու համար: Ռադիո
այն ժամանակ չկար:

Օրվա աշխատանքից հետո, երեկոները նավթի ճրագի
լույսի տակ պարապում էի մեծահասակ գյուղացիների հետ,
նրանց սովորեցնելով գրաճանաչություն: Դա չափազանց

գժմարին, բայց կարևոր գործ էր: Հիշում եմ, թե ինչքան ծանր էր պուղապիներին համար դաս սովորելը, մանավանդ գրելը: Ստուգման ժամանակ նկատեցի, որ Տոնե անունով մի պուղապի քրտինքի մեջ կորել է. մոտեցա նրան: Նա, երբ տեսավ կանգնած եմ իր կողքին, բարկացած ասաց. «էդ անտեր ծուռ վիզը իմ հոգին կերավ, ավելի լավ է գնամ ֆաբ կտրեմ, գերանդի Բաշեմ»:

— Էդ ո՞ր տառն է, Տոնե,— հարցրի նման:

Նա մտալ գրեց և տառի վրա, ասելով. «էս անտեր ծուռ վիզի, անունը մոռացել եմ»:

Երիտասարդներն արագ սովորեցին գրել-կարդալ և արդեն նամակներ էին գրում կարմիր բանակում ծառայող իրենց հարազատներին, նրանցից շատերն անգամ թղթակցում էին թերթերին:

Ձմռանը, երբ դաշտային աշխատանքներից ազատ էին, փոքրիկ պատմվածքներ էի կարդում մեծահասակների համար: Այդ բարեսիրտ, աշխատասեր մարդիկ այնպես մտերմացան ինձ հետ, որ ամեն երեկո, նույն ժամին առանց հրավերի հավաքվում էին: Հիշում եմ. այդպիսի հավաքներից մեկում ես ոգևորված կարդացի Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» էպոսը: Մինչև հիմա էլ հիշում եմ այն բացականչությունները, որ լսվում էին այս ու այն կողմից: Երբ հասա այն տողերին, ուր ասված է.

«Երբորդ անգամ հեծավ իր ձին,
Գրնաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռքին
Քշեց եկավ Դավթի վրա»:

Եկավ զարկեց բռնոր ուժով»
Երեք գիշեր ու երեք օր
Փռչին կանգնեց ամսի նման
Երեք գիշեր և երեք օր
Բոթը տվին Դավթի մահվան»:

Վերջին բառն արտասանելիս, անեծքի և թունդ հայհուցանքի բացականչություններ լսեցի, իսկ պուղապիներից մեկը՝ Զարարն, ասաց. «էդ գուրզը ես տեսել եմ, չուր մկա էնտեղ քնկուկ ա»:

Իսկ երբ կարդացի սլոեմի այն հատվածը, ուր ասված է.

Թրուով ցոլաց Գավլիի հուր ձին
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-կեծակին
Անցավ բառսուն դոմշի կաշին,
Անցավ բառսուն բարերը ցած,
Միջից կտրեց ժանտ հրեշին,
Օխտը գաղ էլ դենը գնաց»:

Լավեցին փոթորկալի ծափահարություններ:

Հետագայում «Սասունցի Գավիթը» տասնյակ անգամներ նորից կարդացի և ամեն անգամ նույն ուշադրությունը, նույն ոգևորությունը: Աստիճանաբար աճեց կոմերիտական կազմակերպությունը և զարձավ մեծ ուժ: Ստեղծվեց ամուր կարգապահություն, կատարվեց աշխատանքի բաժանում, հիմք դրվեց ծրագրված աշխատանքի: Արդեն չկար մի բնագավառ, որին կոմերիտիությունը և նրա ղեկավարությունը ամբողջ երիտասարդությունը ակտիվ մասնակցություն չունենային: Օգնում էին գյուղացին, գյուղատվտին, գանձում էին հարկերը, օգնում էին լծկան շունեցու չքավոր գյուղացիներին վարի, ցանքի և բերքահավաքի ժամանակ, շաբաթօրյակներ էին կազմակերպում գյուղի փողոցները մաքրելու և կարմիր բանակ մեկնածուների ընտանիքներին օժանդակելու համար: Այս բոլորի շնորհիվ բարձրացել էր կոմերիտիության հեղինակությունը: Աշխատավոր գյուղացիությունը հասկացավ, որ կոմերիտականները իրենց լավ բարեկամներն են, և ոչ թե հակառակը, ինչպես տարածում էին նոր կարգերի թշնամիները:

Կոմերիտիությունը սկսեց ակտիվ պայքար ծավալել նաև հին կենցաղի ու սովորույթների դեմ: Գյուղում թեև եկեղեցի չկար, բայց թափառաշրջիկ տերտերները (մտակա գյուղերից) հաճախ էին գալիս և ոչ մի առիթ բաց չէին թողնում իրենց գրպանները լցնելու համար: Կենցաղ մտան կարմիր կնուճքը, կարմիր հարսանիքը, առանց տերտերի թաղումը և այլն: Ամենամեծ դժվարությունն աղջիկներին, մանավանդ երիտասարդ կանանց հասարակական աշխատանքի մեջ ներգրավելն էր: Տղամարդիկ կանանց թույլ չէին տալիս ծոզովներին մասնակցելու: Այդ տարիներին մեծ, անգնահատելի դեր խաղացին կին հրահանգիչները, որոնք շրջում էին գյու-

դերը և տարբեր թեմաների շուրջ գրույցներ անցկացնում կանանց հետ:

Հիշում եմ, թե ինչպիսի մեծ դժվարությամբ մի ներկայացում կազմակերպեցինք: Ամեն ինչ բարեհաջող էր ընթանում, բայց աղջկա դերը խաղացող չկար: Մեզ հաջողվեց շրջկենտրոնի ուսուցչուհիներից մեկին համոզել այդ դերը կատարելու, բայց նոր դժվարության առաջ կանգնեցինք, բեմ չկար և ոչ էլ հարմար սենյակ: Երկար մտածելուց հետո ելքը գտնվեց: Համոզեցինք հարուստ գյուղացիներից մեկին և նա տրամադրեց իր ոչխարի գոմը: Հավաքվել էր համարյա ամբողջ գյուղը, մեծ մասը՝ ոտքի վրա էր: Տեսարաններից մեկում, երբ սիրած աղան և աղջիկը մենախոսում էին, աղջիկն ասաց՝ «էլ չեմ գիմանում, ինձ տար, ինձ փախցրու»: Պետք էր տեսնել հանդիսականների վերաբերմունքը: «Ինչ անամոթն է, էդ ու՞մ աղջիկն է» և այլն: Իսկ երբ աղան պատասխանեց, թե ես քո սիրույց եմ այրվում, բայց ու՞ր տանեմ, տեղից մեկը գոռաց:

«Տղա, լաո, բեր մեր տուն, բեր մեր տուն»:

Թնդացին ընդհանուրի ծիծաղը և ծափահարությունները: Կոմերիտականներն աստիճանաբար իրենց բույրերին, ոմանք էլ կանանց ներգրավեցին հասարակական աշխատանքում: Դա մեծ հաղթանակ էր, որովհետև դեռևս կենցաղում կաշին այնպիսի սովորություններ, որոնք հիշեցնում էին շատ հեռավոր անցյալը:

Հիշում եմ մի այսպիսի դեպք: Գյուղի տղաներից մեկի հարսանիքն էր, հարսին պետք է բերեին հարևան շրջանից: Ամբողջ գյուղը սպասում էր այդ ուրախ պահին: Ես մոտեցա նորափեսային և հարցրի՝ Հովհաննես, նշանածդ լա՞վ աղջիկ է: Նա պատասխանեց, որ աղջկան չի տեսել:— Գուցե չես հավանի,— հարցրի: Նա թե՛ իմ հերն ու մերը հավանել են, ներանք իմ վատը չեն ցանկանա: Եվ այդպես, փեսացուն նույնպես կանգնել և սպասում էր անծանոթ այն աղջկան, որը մի քանի ժամ հետո լինելու էր իր կինը:

Խորհրդային իշխանության օրենքները, որոնք բխում էին աշխատավորության շահերից, աստիճանաբար լայն տարածում էին գտել և միաժամանակ ոգևորում էին մարդկանց: Հատկապես հիշատակության է արժանի այն ոգևորությունը,

երբ մենք բացատրում էինք հարկային քաղաքականության, հողի օգտագործման, կանանց ընտրություններին մասնակից դարձնելու իրավունքը, բատրակների շահերը պաշտպանելու և նման շատ այլ հարցեր:

Ծավալվում էին բացատրական-մասնաշաղկապ աշխատանքները: Չքալոր պյուղացիներին օգնության էր հասնում կառավարությունը: Անվճար բաց էին թողնում սերմացու, օգնում էին քաշող ուժով, ստեղծվել էր փոխադարձ օգնության կոմիտե (ՓՕԿ), երկարատև ժամկետով տրվում էր վարկ և այլն:

Կոմերիտական կազմակերպությունը այս և շատ աշխատանքների ոգին էր:

Պարբերաբար հրավիրվում էին շրջանային մասշտաբով խորհրդակցություններ, ակտիվի նիստեր, որտեղ լսվում էին հաշվետվություններ, օրենքների պարզաբանումներ և նշվում հետագա անելիքները:

Հիշում եմ՝ շրջանային կենտրոնում փոխադարձ օգնության կոմիտեի հաշվետու ժողովն էր: ՓՕԿ-ի նախագահը զեկուցման մեջ այն միտքը հայտնեց, որ ՓՕԿ-ին տրամադրված մի քանի հեկտար հողը լծկան չունենալու պատճառով չի օգտագործվում, ուստի պետք է այդ հողերը կապալով տալ: Երբ նա մի քանի անգամ կրկնեց «կապալով» բառը, նստածներից մեկը իր հիույթում հարձակվեց ՓՕԿ-ի նախագահի վրա՝ ասելով.

«Ես զարմանում եմ մեր նախագահի վրա, այդ հողերը, որ դուք ուզում եք կապալով տալ, էդքան կազալ (ընկույզ) ի՞նչ պետք է անենք»: Դահլիճում առաջացավ ընդհանուր ծիծաղ:

Ցանկանում եմ հիշատակել մի այլ դեպք: Սպառողական կոոպերացիայի շրջանային կոնֆերանսում վարչության նախագահը հաշվետվության մեջ բողոքեց այն մասին, որ Թալինի շրջանին ուղարկում են ծանրաշարժ ապրանքներ և դրանք չեն վաճառվում: Այն հարցին, թե որոնք են այդ «ծանրաշարժ» ապրանքները, նախագահը պատասխանեց. «Օրինակ, մեզ ուղարկել են երկու զույգ կրկնակողիկ, և արդեն երեք տարի է ընկած է խանութում ու գնող չկա»:

Մեր երկիրը պատմական շատ կարճ ժամանակամիջոցում թռիչք է կատարել, բառիս լայն իմաստով՝ թռիչք։ Այժմ Մեհճիրան գլուղում (կարճադրյուր) կան կենդանի վկաներ, ովքեր համոզիչ կարող են պատմել անցյալի դաժան և դառն օրերի մասին։

Անցան տարիներ և մեր մեծ հայրենիքի հետ հասակ առավ, տնտեսապես հզորացավ, բարդավաճեց, ծաղկեց։ Նաև թալինի շրջանը։

Այդ մասին թող խոսեն փաստերն ու թվերը։

Իսկ թվերի լեզուն պերճախոս է։

Մեհճիրանն այժմ ունի բազմահարկ, լուսավոր և բոլոր հարմարություններով դպրոցական շինք, որտեղ սովորում է ալիլի քան 550 աշակերտ, իսկ դիրեկտորը այն ժամանակվա ատաջաղեմ աշակերտներից մեկն էր։

1925—26 ուսումնական տարվա մեկ ուսուցչի փոխարեն այժմ աշխատում են 36 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնցից 25-ը բարձրագույն կրթությամբ։ Իսկ ի՞նչ էր ներկայացնում նախկին դպրոցը։

Նախկին հողաձածի, խարխուլ «դպրոցը» 20—25 աշակերտներով, անձրևի ժամանակ այնպես էր կաթում, որ պարպել հնարավոր չէր, այն տաքացվում էր թիթեղյա վառարանով, իսկ վառելանյութը գոմաղբն էր, որը հերթով բերում էին աշակերտները։ Քամու ժամանակ ծուխը լցվում էր սենյակը և պարպելը դառնում անհնար։

«ՔՈՒՇԵՎԻԿՅԱՆ ԴՐՈՇՈՎ» ԼՐԱԳՐԻ ԾՆՈՒՆԳԸ

Երբ կենտրոնական թերթերում տպագրվեց Անդրերկրյանի որոշումը՝ բոլոր շրջաններում թերթ ստեղծելու մասին, ես դարձա, և ինչ մեղքս թաքցնեմ, թերահավատությամբ նայեցի այդ որոշմանը։

Բայց այդ որոշումից չէր անցել նույնիսկ մեկ շաբաթ, երբ ինձ զանգեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի Կուլտպրոպ բաժնի վարիչ Ադո Ադոյանը և ասաց, որ շտապ անցնեմ Կենտկոմի քարտուղար ընկեր Խանջյանի մոտ։

Նա այն ժամանակ աշխատում էի «Ավանդարդ» թերթում։

որպէս պատասխանատու քարտուղար: Կենտկոմ կանչելուց մեկ օր առաջ «Աւանգարդում» իմ ստորագրութեամբ տպագրվել էր մի հոդված և ծաղրանկար, որտեղ խիստ քննադատվում էր պետհրատի դիրեկտորը՝ կոմերիտմիութեանը նվիրված գրքերի և բրոշյուրների տպագրութեանը ձգձգելու համար: Ես կարծեցի, թե ինձ Կենտկոմ, և այն էլ ընկ. Խանջյանի մոտ հրավիրելու պատճառն այդ էր: Սակայն մեծ հեղավ զարմանքս, երբ ներս մտա ընկ. Ա. Խանջյանի առանձնասենյակը և նա առանց նախաբանի, ժպտալով ասաց. «Բավական է կոմսոմոլ մնաս, վաղվանից պետք է անցնես կուսակցական աշխատանքի: Պետք է գնաս Թալին, որպէս շրջանային թերթի պատասխանատու խմբագիր: Այսօրվանից զբաղվիր շրջանային տպարանը կահավորելու, թերթի տպագրութեան համար թուղթ և անհրաժեշտ այլ նյութեր ստանալու և տեղափոխելու հարցերով: Գնալուց առաջ հղիր ընկ. Ադոյանի մոտ, նա կասի ում մոտ գնալ և ինչ անել: Քեզ այնտեղ ուղարկելու սրոշումը կուղարկենք»:

Այնուհետև նա սկսեց ցուցումներ տալ, թե ինչ հարցերի վրա պետք է ուշադրութեան դարձնել: Դեռ իր խոսքը չէր ավարտել, երբ ներս մտավ քարտուղարը և հայտնեց, որ Ախտաշից (Հրազդանից) մի խումբ պիոներներ են եկել և ուզում են իր մոտ գնալ: Նա ընդհատեց խոսակցութեանը, ոտքի կանգնեց և կարգադրեց երեխաներին ներս կանչել: Երբ առանձնասենյակի դուռը բացվեց, ներս մտան արևավառ, շատնրված երկար մազերով 10—15 երեխաներ, տարբեր գույնի, տարբեր չափի վերնաշապիկներով, տրեխներով, հնամաշ կոշիկներով, կարկատած շալվարներով, սակայն բոլորն էլ կարմիր վզկապներով:

Ընկեր Խանջյանի այն հարցին, թե՞ ի՞նչ կա, երեխաներ, ինչո՞ւ եք եկել, նրանցից ամենահամարձակը, երեխ նաև ղեկավարը, առաջ եկավ և ղեկույցի կարգով ասաց.

— Ընկ. Խանջյան, եկել ենք խնդրելու, որ մեկ հատ թրմբուկ տաք մեր ջոկատի, թմբուկ չունենք:

Խանջյանը ժպտաց, շրջանի ղեկավարների հասցիին ինչ-որ բան շշնջաց և դարձավ դեպի երեխաները:

«Երեխաներ,— ասաց նա,— կվերադառնաք շրջան և լավ կսովորեք, մի անհամոզուտացեք, դուք կունենաք և՛ թմբուկ, և՛

նվազելու այլ գործիքներ»։ Երեխաները իրար նայեցին և բուրն էլ ուրախ ժպտացին։ Այնուհետև խանջյանը կանչեց քարտուղարին և կարգադրեց. «Ձանգահարեք լուսժողովատ, ասեք թող կերակրեն երեխաներին և մեքենայով ուղարկեն Ախտա, վաղը ժամը 11-ին թող ինձ մոտ գա պիոներ կենտրոնացի նախագահը, իսկ այժմ միացրեք Ախտա, գործկոմի նախագահին»։ Նա վեր կացա, նա ժպտալով ինձ ասաց. «Թեև մեր խոսակցությունը ընդհատվեց, սակայն այս երեխաները քեզ շատ բան սովորեցրին։ Թերթը, կուսակցական, կոմերիտական, պիոներական կազմակերպությունները, բուրը, բուրը պետք է հատուկ,— նա շեշտեց,— հատուկ ուշադրություն դարձնեն մատաղ սերնդի դաստիարակության գործին։ Մեր ապագան դրանք են»։

— Դե գնա,— ասաց ինձ,— առանց ժամանակ կորցնելու զբաղվիր քո գործով, հիշիր, որ մայիսի 5-ին, մամուլի օրը, պետք է լույս տեսնի թերթի առաջին համարը։

Հետո ձեռքս սեղմեց, հաջողություն մաղթելով։ — Առաջին համարը չմոռանաս ուղարկել։

ԴԵՊԻ ԹԱԼԻՆ

Առավոտից մինչ իրիկուն հիմնարկից հիմնարկ եմ շրջում՝ տպարանի կահավորում ձեռք բերելու նպատակով։ Հանրապետության տպագրական բազան այնքան թույլ էր, որ եթե մի մեքենա մի տեղից վերցնեիր, գործը տվյալ օբյեկտում կանգ կառներ։ Չնայած Կենտկոմի կարգադրությունը կար, որ ինձ օգնեն, սակայն երբ գործը հասնում էր այս կամ այն մեքենան տալուն, տրանջում էին։ Նա, որ տպագրական գործին ծանոթ էի, չէի դարմանում։ Երբ այս դժվարությունների մասին տեղյակ պահեցի Կենտկոմին, կարգադրություն եղավ տպագրական մեքենան վերցնել Լենինականից։ Այդպես էլ եղավ։ Այս անգամ կանգնեցինք նոր դժվարությունների առաջ, այդ ծանրաշարժ մեքենան ինչպե՞ս և ինչո՞վ տեղափոխել։ Սարսափելի վատ ճանապարհներ էին, բռնատար մեքենաներ համարյա չկային և այլ հանգամանքներ, որոնք դժվարացնում էին մեր գործը։ Բայց դրա ելքն էլ գտանք. մեքենան քանդեցինք և մաս-մաս տեղափոխեցինք։

Թալինի հին դպրոցի շենքից մեզ հասկացրին երկու սենյակ, որից մեկը, որպես տպարան, իսկ փոքրը՝ և՛ խմբագրություն, և՛ խմբագրի ննջարան: Տպագրական տառերի մի մասը ձեռք բերեցինք Երևանից, մյուս մասը՝ Լենինականից: Քանի որ տառատեսակները շատ քիչ էին, այդ պատճառով հնարավոր չէր թերթը գեղեցիկ, ձևավորված հրատարակել: Երբ տպագրական բազան կար, մնում էր ամենադժվարը՝ կադրերի հարցը: Երևանից տպագրական գործը հասկացողներից ոչ մեկին չկարողացանք համոզել, որ Թալին գա. ասենք նրանց՝ դեկավարները չէին էլ թողնում: Այն ժամանակ շատ քիչ էին մասնագետները:

Այս անգամ էլ մեզ օգնության եկավ Լենինականը: Մեր տրամադրությունն տակ ուղարկեցին հիանալի մասնագետ Գարեգին Մալխասյանին, որը և՛ շարում էր, և՛ էջ կապում, և՛ տպագրում: Պատրաստվում էինք տպագրության հանձնել թերթի առաջին համարը, որը, ինչպես խոսքս, էր կարգադրել, պետք է լույս տեսներ մայիսի 5-ին՝ մամուլի օրը:

Շրջկենտրոնում ակտիվը, հասկապես կոմերիտմիությունը, տպարանից չէր հեռանում: Նրանք շրջապատել էին շարող վարպետին և ուշադրությամբ նայում էին, թե ինչպես տառերը հատ-հատ արկղից վերցնում և բառեր էր կազմում: Երբ առաջին էջը պատրաստ էր, պարզվեց, որ մյուս էջը շարելու համար տառ չկա: Ո՞րն էր ելքը: Պետք է մի էջը տպագրեինք, տառերն ազատեինք՝ մյուսը էջը շարելու համար:

Այդպես էլ արինք:

Պատրաստի էջը վարպետ Գարեգինը տեղադրեց տպագրող մեքենայի մեջ: Մեքենան շրջապատված էր հետաքրքրասեր երիտասարդներով, ձիշտ այնպես, ինչպես լինում է տոնախմբություններում, հարսանիքներում՝ շուրջպարի ժամանակ: Մեքենան պետք է աշխատեր ձեռքով, էլեկտրականություն չկար: Հերթագրվեցին, թե ովքեր իրավունք ունեն բռնակը պատելու պատվին արժանանալ և ով ումից հետո: Այդ ցուցակը կազմեց կոմերիտմիության շրջկոմի քարտուղարը:

Առաջին հիսուն օրինակը տպագրելու պատիվն ինձ բաժին բնկավ, այնուհետև ըստ ցուցակի:

Հերթով բոլորն էլ իրենց 50 օրինակը տպագրեցին և երբ 1500 օրինակ տպագրվեց (տպաքանակն այդքան էր), բոլորս միասին բզավեցինք:

Ուռա՛, կեցցե՛ բոլշևիկյան մամուլը, կեցցե՛ «Բոլշևիկյան դրոշմը» (այդպես էր թերթի անունը):

Վարպետ Գարեգինի աչքերը ուրախությունից փայլում էին:

Ծնվեց և մեծացավ, փորձով հարստացավ «Բոլշևիկյան դրոշմը»: Առաջին համարը կուսըջկոմի քարտուղարը անձամբ հանձնեց ընկ. Խանջյանին:

ԴԵՊԻ ԳՈՐԾ

Թերթի լույս ընծայման հանդիսավոր արարողությունն ավարտվեց: Այժմ հարկավոր էր ծրագրված համառ աշխատանք: Իսկ Թալինն այն ժամանակ Հայաստանի հետամնաց շրջաններից էր. անբարեկարգ, բնակչության մեծ մասը անգրագետ, գյուղերն առանց էլեկտրական լույսի և ռադիոյի (միայն 3 գյուղում կար ռադիո):

Թերթը կոչված էր և պարտավոր էր այդ հարցերը պահել իր ուշադրության կենտրոնում: Հարկավոր էր խրախուսել առաջավորներին, խարաղանել թերությունները: Իսկ այդ աշխատանքները հաջող կատարելու համար հարկավոր էին մարդիկ, իսկ խմբագրությունում միայն ես էի: Գիշերները չէի քնում. շարունակ ծրագրեր էի կազմում, մտածում դրանց իրագործման համար:

Կուսըջկոմի քարտուղարի հետ որոշեցինք նախ ծանոթանալ գյուղերին, բնակչությանը, զրուցել նրանց հետ: Ձիերով շրջեցինք գյուղերը: Պատկերն անմխիթարական էր: Թույլ էին կուլտմասսայական աշխատանքները, բոլոր գյուղերում չէր, որ կալին կուսըջիչներ, եղածներն էլ լավ չէին աշխատում: Հիշում եմ, շրջագայություններից մեկի ժամանակ գիշերեցինք Ն. Ղարաղոյմազ գյուղում: Սարսափելի գիշեր էր: Լվերը այնպիսի հարձակում սկսեցին մեզ վրա, որ աչք փակել հնարավոր չէր:

Մինչ ես և շրջկոմի քարտուղարը շրջում էինք շրջանի գյուղերը, Երևանից մեր տրամադրության տակ էին ուղարկել Ս. Սարգսյանին՝ որպես թերթի պատասխանատու քարտուղար,

և մի գրական աշխատող։ Այդպիսով խմբագրությունը լրիվ կազմով էր՝ խմբագիր, պատասխանատու քարտուղար և գրական աշխատող։ Թերթը լույս էր տեսնում 1500, հետագայում 3 հազար օրինակ տպաքանակով։ Թեև ավելի շատ պահանջ կար, բայց թղթի պակասը թույլ չէր տալիս ավելին տպագրել։ Կազմած պլանի համաձայն ընդհանուր հարցերից բացի ունեին մշտական բաժիններ. թերթի ամեն համարում պարտադիր տեղ էր տրվում մթերումների, հատկապես հացամթերման, բերքահավաքի կազմակերպման, անգրագիտության վերացման և դպրոցական շինարարության հարցերին։ Պլանում հատուկ տեղ էր տրված ճանապարհաշինարարության խնդիրներին։ Այդ օրերին «Իզվեստիա» թերթը հայտարարեց մրցույթ և սահմանեց մրցանակ այն թերթերի համար, որոնք կլուսաբանեն և կօգնեն ճանապարհաշինարարության գործին։ Շրջանային գործադիր կոմիտեն մրցանակներ սահմանեց գյուղերի հարվածային կոլեկտիվների և լավագույն աշխատողների համար։

Այդ միջոցառումները վիթխարի նշանակություն ունեցան։ Շրջանի ամբողջ աշխատավորությունը մեկ մարդու պես լրծվեց աշխատանքի։ Թերթը իր էջերը լայնորեն տրամադրեց ստանձնած պարտավորությունների կատարմանը, խնդիրների լուսաբանմանը։ Միաժամանակ խարաղանց, պարսավեց հեռ. մեացողներին։ Թերթի այդ օրերի համարներում կարդում ենք. «Թալինից Աշնակ տանող ճանապարհը պատրաստ է», կամ «Մինչև վերջերս Նդիլից Բալբըղ տանող ճանապարհ չկար և բոլոր տեղափոխումներն այդ գյուղերի միջև կատարվում էր շալակով, բայց գյուղխորհուրդը 114 աշխատավոր ձեռք դուրս բերեց ճանապարհ կառուցելու համար և այսօր սալուղին արդեն պատրաստ է»։

«Ն. Փիրթիբջանի աշխատավորությունը մեծ ոգևորությամբ լծվել է ճանապարհաշինարարության աշխատանքներին։ Մաստարա-Փիրթիբջան ճանապարհն արդեն պատրաստ է։ Շուտով կսկսվեն հանդամիբջան ճանապարհների պատրաստման աշխատանքները»։

«Թալինից-Աշնակու տանող ճանապարհը պատրաստ է»։

«Մաղարջուղի աշխատավորները ավարտեցին ճանապարհների պատրաստման պլանը»։ Այդպիսի հաղորդագրություն-

ներ ստացվում էին բոլոր գյուղերից: Ոգևորված աշխատանքը ավելի իր փայլուն արդյունքը:

Հայճանտրանսը Թալինի շրջանի համար պլանավորել էր (6 ամսվա համար) նոր ճանապարհների պատրաստում 10 կիլոմետր ընդհանուր երկարությամբ, կառուցվեց 91 կիլոմետր: Հիմնական վերնորոգման համար նախատեսված 15 կիլոմետրի փոխարեն վերնորոգվեց երեսուն կիլոմետր: Այդպիսի թափով ճանապարհաշինարարությունը շարունակվեց նաև հետագա ամիսներին: Երբեմն ճանապարհազուրկ Թալինի շրջանի գյուղերը իրար հետ կապվեցին լայն, բարեկարգ ճանապարհներով: Դա մեծ հաջթանակ էր:

Շրջանային գործադիր կոմիտեն հատուկ որոշմամբ ճանապարհների պահպանությունը ամրացրեց գյուղատվիտենքին՝ պարտավորեցնելով նրանց հսկել և միշտ բարեկարգ վիճակում պահել: Ճանապարհաշինարարության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար պարգևատրվեց Թալինի շրջանը, այդ թվում՝ շրջանի լավագույն աշխատողների մի խումբ, ինչպես նաև «Բոլշեիկյան դրոշմով» թերթի խմբագիրը: Մենք անչափ ուրախ էինք:

Շրջանային կոմիտեն, շրջկոմի քարտուղարի ստորագրությամբ, հատուկ զեկուցագիր ուղարկեց Աղասի Խանջանին՝ աշխատանքները ժամկետից շուտ և որակով ավարտելու մասին:

Շատ չանցած շրջկոմի քարտուղարին կանչեցին Երևան և մի քանի օրից հետո նա վերադարձավ Թալին նոր մեքենայի մեջ բազմած, հպարտ, կարծես ռազմաճակատից հաղթանակով վերադարձած զինվոր էր: Կենտկոմի քարտուղարը խոստացել էր ճանապարհները բարեկարգելուց հետո շրջկոմին տրամադրել մեկ ավտոմեքենա և կատարեց իր խոստումը:

Մարդատար մեքենան շրջկենտրոն մտնելու ժամանակ շրջապատվեց երեխաներով: Մոտենում էին, շոշափում և զարմանքով նայում ու ուրախանում:

* * *

Աստիճանաբար թերթի շուրջը համախմբվեց թղթակիցների հիանալի ակտիվ: Բոլոր գյուղերում արդեն ունեինք ստուգ-

ված, իրենց պարտքն ու պարտականութիւնը հասկացող թղթակիցներ: Հոգ չէր, որ նրանք գրում էին կիսատ-պռատ, տառախալներով ու կիսագրագետ: Նրանց թղթակցութիւններում կային թանկարժեք տեղեկութիւններ: Նրանք անխնամերկացնում էին կարգապահութիւնը խախտողներին, սոցիալիստական սեփականութիւնը համիշտակողներին, իրենց պաշտոնը չարաշահողներին:

Լավագույն թղթակիցներին խրախուսում էինք՝ լուսանկարները թերթում տպագրելով, շնորհակալագրերով, զրամով և այլն:

Անգրագիտության վերացումը հարվածային ճակատ է

Անգրագիտութեան վերացման համար մոբիլիզացվեցին բոլոր կարող ուժերը, առաջին հերթին ուսուցիչները: Թերթը հատուկ բաժին էր բացել, որտեղ տպագրվում էին տեղերից եկած թղթակցութիւնները: Այդ բնագավառի լավ աշխատողների համար սահմանված էին խրախուսանքի միջոցներ:

«Բոլշեկիյան դրոշմով» թերթի այդ տարվա համարներից մեկում կարդում ենք. «Մենք՝ Նշիլի գեղջիկահիներս, որոշեցինք գրագետ դառնալ»: «Փիրմալաքում բացվել է 4 լիկկայան, բոլոր հարմարութիւններով, որտեղ 77 անգրագետները մեծ ոգևորութեամբ են հաճախում»:

«Մաստարացում բացվեց 9 լիկկայան, որտեղ ընդգրկված են 232 անգրագետ, որոնցից 148-ը կանայք են»: «Գյուղու գյուղում բացվեց 4 լիկկայան», «Աշնակի 8—11 տարեկան բոլոր երեխաները ընդգրկված են դպրոցում» և այլն: Նման հաղորդումներ տպվեցին բոլոր գյուղերից: Շատ կարճ ժամկետում շրջանում կազմակերպվեց 99 լիկկայան, որից 8-ը՝ քրդական: Շրջանային ժողկրթբաժնի տվյալներով լիկկայաններում ընդգրկված էին 3119 մարդ:

Թերթը ոչ միայն տպագրում և խրախուսում էր առաջավորներին, այլև խիստ քննադատում էր թերացողներին, անգրագիտութեան վերացման գործը ձախողողներին և բավարարվում փաստերը հրապարակելով: Նա հետևում էր և մեղավորներին ենթարկում պատասխանատվութեան: Այդ հատկապես


տեղի էր ունենում շրջանային հավաքներում, խորհրդակցություններում և այլն: Անգրագիտության վերացման գործը անհամեմատ դժվար էր հատկապես տարեց մարդկանց շրջանում: Թերթի թղթակիցները գյուղերից հաղորդում էին մարդկանց անուններ, որոնք գրաճանաչ են դառել և արդեն նամակներ են գրում կարմիր բանակում գտնվող իրենց տղաներին: Սրտանց ուրախանում էին ոչ միայն գրագետ դարձած կոլտնտեսականները, այլև նրանք, որոնց ջանքերով էին գրաճանաչ դարձել: Բանակ մեկնող զորակոչիկների հետ հատուկ պարապմունքներ էին տարվում: «Ոչ մի անգրագետ զինակոչիկ» լուզունդը շէր իջնում թերթի էջերից: Մինչև 1933—34 թթ. անգրագիտությունը շրջանում հիմնականում վերացվեց:

Տեմպերի տախտակ

Ամբողջ շրջանում բուռն թափով ծավալվեց սոցիալիստական մրցությունը: Մրցում էին գյուղը գյուղի հետ, կոլտնտեսությունը՝ կոլտնտեսության, բրիգադը՝ բրիգադի, օղակն՝ օղակի հետ: «Բուլշեիկյան գրոշովը» իր էջերը լայնորեն բաց էր արել մրցողների առջև: Պարբերաբար տպագրվում էին մրցող կողմերի պարտավորությունները և ստուգվում կատարման ընթացքը: Թերթի տմեն համարում տպագրվում էին և՛ առաջավորների, և՛ հետ մնացողների անունները: Մրցությունը ծավալելու գործում հսկայական դեր խաղաց տեմպերի տախտակը: Պատրաստել էինք հատուկ կլիշե, որտեղ նկարված էր կրիա, ավանակ, սալ, ձի, մեքենա և օդանավ:

Սովորաբար 5—10 տոկոսով կատարողները ընկնում էին այն կլիշեի տակ, որտեղ նկարված էր կրիա, 20—25-ը՝ ավանակի, 50—60-ը՝ ձիու, 100-ը՝ մեքենայի, հարյուրից բարձր՝ օդանավի: Վայ այն կազմակերպությանը, որն ընկնում էր «ավանակի» նկարի տակ, այդպիսիների ղեկավարները ծաղրաբանակի առարկա էին դառնում ոչ միայն իրենց գյուղում, կոլտնտեսությունում, այլև ամբողջ շրջանում:

Թերթը տպագրել էր նաև այն պայմանները, որոնց կատարողները կարող էին բարձրանալ կարմիր տախտակին, պատվո տախտակին:



Այդ պատվին կարող էր արժանանալ այն կոլտնտեսությունը, որը բոլոր կոլտնտեսականներին տեղյակ կպահեր կուսակցության և կառավարության որոշումներին բերքահավաքի մասին, որը խոտհնձի, հացահատիկի բերքահավաքը կավարտեր նշված ժամկետին և որակով, որը կկազմակերպեր հասկերի հավաքումը արտերից, որը լավ կծավալեր կուլտմասսայական աշխատանքները և այլն:

Հատուկ հանձնաժողովի միջոցով, որի կազմում էր նաև թերթի ներկայացուցիչը, ստուգվում էր պարտավորությունների կատարումը, որից հետո ընդունվում որոշումը՝ հաղթողների մասին: Այնուհետև այդ որոշումը հրապարակվում էր թերթում: «Բոլշեիկյան դրոշմի» այգպիսի համարները ձեռքից-ձեռք էին անցնում:

Պարբերաբար ստուգվում էր պարտավորությունների կատարման բնթացքը և ստուգումներից եթե պարզվում էր, որ բերքահավաքին պատրաստ չէ այս կամ այն կոլտնտեսությունը, թերթը ահազանգում էր:

Թերթի օպերատիվությունը և ահազանգը օգնում էր ոչ միայն տվյալ կոլտնտեսությանը, այլև մյուսներին:

Այժմ թերթը փոխել է իր անունը («Կոմունիզմի դրոշմ»), սակայն մնացել է որպես կուսակցական շրջանային կոմիտեի մարտական օգնականը և մասսաների կազմակերպիչը:

Բոլշեիկյան մամուլի իր դերը պատվով կատարելու համար թերթը պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով, իսկ նրա խմբագիր Սուրեն Դավթյանը արժանացել է վաստակավոր լրագրողի բարձր կոչմանը:

ՍԻՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, ՄԵԾ ԲԱՂԱՋԱՅԻՆ

(Ավ. Իսահակյան)

Աշակերտ էի, երբ կարդում, անգիր էի անում Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները: Մենք՝ աշակերտներս, մրցում էինք, թե ով ավելի լավ կարտասանի այս կամ այն ոտանավորը: Եվ բոլորս երազում էինք տեսնել Ավ. Իսահակյանին, բայց ավա՞ղ, դա միայն երազանք էր, որովհետև նա արտասահմանում էր, մենք՝ լենինականի մանկատանը...

Բայց ում մտքով կանցներ, որ կգա մի երջանիկ օր, երբ
ես՝ կհանդիպեմ, կծանոթանամ և կմտերմանամ հանճարեղ
բանաստեղծի հետ:

* * *

1950 թ. մարտին ինձ նշանակեցին պետհրատի գիրեկտոր:
Մինչ այդ բազմաթիվ առիթներով հանդիպել էի մեծ բանաս-
տեղծին (1946 թվականից ղեկավարում էի ՀՍՍՀ ԳԱ հրատա-
րակչությունը), սակայն մեր մտերմությունը սկսվեց պետ-
հրատից: Գրեթե ամեն օր, ամառ թե ձմեռ, առավոտյան
ժամերին գալիս էր պետհրատ: Ամեն անգամ ներս մտնելիս
ասում էր. «Հալի թոխը մինչև մարագն է, իսկ գրողի թոխ-
ը՝ մինչև պետհրատ»:

Հաճախ հավաքվում էին, Իսահակյանից բացի, Դ. Դեմիրճ-
յանը, Ն. Զարյանը, Հր. Քոչարը, Սիրասը, Արազին, Գ. Էմի-
նը, Ս. Տարոնցին, Սարմենը, Շիրազը, Հր. Հովհաննիսյանը, Վ.
Նորենցը, Գ. Սարյանը և ուրիշներ: Ով ներս էր մտնում ու
տեսնում Իսահակյանին, այլևս դուրս չէր գնում: Այսպիսով
ստեղծվում էր անհրաժեշտ, անօրակարգ ժողով: Հավաքված-
ները շրջապատելով Վարպետին, ժամերով զրուցում, կատա-
կում, ծիծաղում էին: Լինելով աշխարհ տեսած մարդ, Վար-
պետը անսպառ նյութ ուներ պատմելու. նա կենդանի մատե-
նադարան էր, հանրագիտարան և երբեք առիթը բաց չէր թող-
նում սրախոսելու: Հիշում եմ՝ պետհրատի գեղարվեստական
խորհրդի նիստ էր. ներկա էին Դ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը,
էդ. Թոփչյանը, Հր. Քոչարը, Գ. Աբովը, Հ. Ղանալանյանը,
բազմաթիվ գրականագետներ, քննադատներ:

Քննվում էին «Հաշկական անթուղիա» ժողովածուի մեջ
տեղադրված նյութերը և, ինչպես միշտ, այս անգամ ևս բուռն
վիճաբանություններ եղան: Վերջում ես իմ ելույթում ասացի,
որ «անթուղիայի կազմողները մի փոքր խախտել են այս
կարգի ժողովածուների կարևորագույն սկզբունքը: Անթուղ-
իայից դուրս են մնացել ավելի աչքի ընկնող հեղինակներ և
ընդհակառակը՝ տեղ են գտել ավելի թույլ գործեր»:

Այլ. Իսահակյանը տեղից կես լուրջ, կես կատակ ասաց.

— Հարգելի խնկանոսը մոռանում է, որ ծաղկեփնջի մեջ
մոլախոտ էլ է լինում:

Առաջացավ քնդհանուր ծիծաղ: Եվ մասնակի փոփոխու-
թյուններով հաստատվեցին անթուղիայի նյութերը:

Այլ. Իսահակյանի ինչպես ուրախությունը, այնպես էլ
տխրությունը յուրահատուկ էր: Երբ տրամադրությունը վատ
էր, մոռցվում էր, խոժոռվում: Հատկապես ծանր էր տանում
իր հասակակից քնկերների, ծանոթների մահը: Հիշում եմ,
երբ ակադեմիկոս Գ. Ղափանցյանի թաղման ժամանակ նրա
թեք բռնած աստիճաններով իջնում էինք, նկատեցի, որ նա
արտասվում է:

— Վարպետ,— ասացի,— ձեզ հուզվել չի կարելի:

— Այո՞, չի կարելի, բայց դու չես իմանում՝ բոլորը գնա-
ցին, մնացի մենակ: Ասաց, թաշկինակը հանեց և սրեց աշ-
քերը:

Երկա՛ր, շատ երկա՛ր մտածում էի նրա ասածի վրա:
«Բոլորը գնացին, մնացի մենակ...»

Մի անգամ ղանգահարեց և մերենա պահանջեց: «Տրամա-
դրությունս վատ է,— ասաց նա,— ուզում եմ քաղաքից դուրս
գալ, եթե կարող ես դու էլ արի»: Երբ տեղ հասա, նա արդեն
պատրաստ սպասում էր:

Մերենայում ասաց.

— Եթե դժվար չէ, Դերենիկին և Ստեփանին¹ էլ վերցնենք:

— Իհարկե դժվար չի, Վարպետ,— պատասխանեցի:

Երբ բոլորս տեղավորվել էինք՝ հարցրի.

— Դեպի ու՞ր:

— Դեպի վերև, Խաչատուրի տան կողմը²:

Աբովյանի փողոցով բարձրանալիս վարորդը միացրեց
ռադիոընդունիչը, և կարծես հատուկ պատվեր լինեք. հնչեց՝

«Սիրեցի, յարս տարան,

Յարս տվին ու տարան,

էս ինչ զուլում աշխարհ է...»

Առիթից օգտվելով, հարցրի.

— Վարպետ, ճի՞շտ է, որ «յարիդ» տարել են: Փոքր Լը-
ռությունից հետո, բավական ուրախ պատասխանեց:

¹ Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան:

² Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը:

— Այո՛, ճիշտ է և լավ եղավ, որ տարան, եթե շտաներին, այս բանաստեղծութիւնը չէի գրի: Մենք բոլորս կ'մեռնենք, իսկ այդ բանաստեղծութիւնը երկա՛ր, երկա՛ր կ'ապրի:

Ստեփան Զորջանը դիմելով ինձ՝ ասաց.

— Զեր սերունդը երջանիկ սերունդ է, տեսնո՞ւմ եք տեխնիկան ինչ է անում: Հարմարավետ նստած գնում ենք, երաժշտութիւն լսում, իսկ մեր ժամանակ գնում էինք սալլով, ոտքով, լավագոյն դեպքում ձիով կամ կառքով:

Այդ խոսքի վրա ես ավելացրի.

— Մի հարջուր տարի էլ ապրեինք, տեսներեք այն ժամանակ ինչ կ'լինէր:

Դեմիրճյանը, որ նստած էր իմ կողքին, ձեռքս բռնեց և ասաց.

— Եթե հարջուր չէ, հազար տարի էլ ավել ապրենք, նորից պիտի ցանկանանք էլի մի հարջուր տարի ապրել. եկեք բավարարվենք այնքանով, որքան բնութիւնը բարեհաճել է տալ:

Իսահակյանը գիտեր ուրախանալ, կատակել, ծիծաղել: Այդպիսի ժամերին բարի, հայրական ժպիտը նրա երեսից անպակաս էր:

Հիշում եմ. հավաքվել էինք Վիկտոր Համբարձումյանի մոր ծննդյան տարեդարձը նշելու: Այստեղ էր նաև Վարպետը տիկնոջ՝ Սոֆիկի հետ: Մինչ սեղանի շուրջ նստելը, նա հավաքվածներին զանազան բաներ պատմեց, ծիծաղեցրեց և ծիծաղեց:

Եվ երբ կենացներ էին խմում, նա բարձրացրեց բաժակը և առաջարկեց խմել Վ. Համբարձումյանի կենացը, մեծարեց նրան՝ «մեր պարծանքը, մենք հպարտանում ենք քեզանով» և վերջում ավելացրեց.

— Սիրելի Վիկտոր, դուք՝ աստղագետներդ, երկնքում ի՞նչ եք փնտրում, չգիտեմ, բայց մենք՝ բանաստեղծներս, վերև, աստղերին նայելիս՝ սիրուն աղջիկ և սեր ենք փնտրում»:

Ներկա եղողները լիաթոք ծիծաղեցին:

Իսահակյանը շատ էր վշտանում, քունը կորցնում, երբ որեւէ մեկին անհաջողութիւն, կամ, մասնավանդ, դժբախտութիւն էր պատահում:

Գրողներից մեկը, որը միաժամանակ պաշտոն էր վարում, թույլ էր տվել ֆինանսական կոպիտ խախտումներ, չարաշահումներ: Մեղադրանքն այնքան ծանր էր, որ մեղավորը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեր:

Եվ ահա Վարպետը մոռացվել էր, հանգիստը կորցրել: Առավոտյան վաղ եկավ պետհրատ, պատմեց այդ բոլորը և ավելացրեց:

— Ինչ գնով էլ լինի, պետք է ազատել բանտարկությունից, մի քանի երեխա ունի:

Նստեց, պահանջեց գերագույն դատարանի նախագահի, Երևան քաղաքի դատախազի, գերագույն սովետի նախագահի հեռախոսների համարները և զանգահարեց բոլորին: Երբ խոսողներից որեէ մեկն ասում էր՝ «հնարավոր չէ, օրենքին դեմ է», նա խնդրում էր պատժել, բայց ազատել բանտարկությունից:

Մի երկու օրից, երբ նորից եկավ պետհրատ, ճակատամարտը տարած հրամանատարի էր նման: Բավարարվել էին մեղավորին պաշտոնից ազատելով:

Իսահակյանը սարսափելի չէր սիրում այն գրողներին, որոնք օր ու գիշեր հանգիստ չէին տալիս նրան իրենց «աշխատություն» մասին դրական կարծիք ստանալու համար: Մարդկանց օգնելու իր բարի բնավորության շնորհիվ նա երբեմն չէր կարողանում ազատվել այդպիսիներից և ստիպված, հակառակ իր կամքի, գրում էր՝ «Արժանի է տպագրության»: Մի օր ներս մտավ և դեռ իր սովորական բարեւը չասած, դիմեց ինձ:

— Այս գիշեր բուրդովին աչք չեմ փակել, մի շատ թույլ գործի դրական կարծիք եմ տվել, եկա տեղյակ պահելու:

Դործը, որին մենք ծանոթ էինք, իրոք հրատարակելու բան չէր, բայց հեղինակը ինչքան էր շարժարել Վարպետին, որ նա ստիպված դրական կարծիք էր տվել:

Ես նրան հանգստացրի և ասացի, որ մենք կխոսենք հեղինակի հետ, կհանձնարարենք նորից մշակել գործը:

Ուսերից մի ծանր բեռ գցած մարդու ժպիտով տուն վերադարձավ: Մեքենա առաջարկեցի՝ հրաժարվեց:

— Ոտքով գնամ,— ասաց,— մի քիչ մաքուր օդ շնչեմ:

Հերթական այցելութուններն մեկի ժամանակ նկատեց, որ տրամադրութունս վատ է:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց:

Պատմեցի, որ հրատարակված գրքերից մեկի մասին խիստ բացասական գրախոսական է տպվել թերթում:

— Ա՛յ տնաշեն, դրա համար արժե՞ տխրել: Երեխան որ ծնվում է, թեկուզ քիթը ծուռ և աչքերը շաշ, միևնույն է, ապրում է: Գիրքն էլ, երբ տպագրվում է, ապրում է ինչքան էլ վատ լինի: Վաղն էլ լավի մասին կգրեն, դա բնական է, լավին՝ լավ կասեն, վատին՝ վատ:

Այդ բոլորն լսեց, որ բարձրախոսով լուրեր են հաղորդում: Յույց տալով ուղիորդունիչը, ծիծաղելով հարցրեց.

— Էդ խարարբզանը ի՞նչ է ասում:

Հայրենական պատերազմի տարիներին Վարպետը որոշ ժամանակ ապրել էր Թալինի շրջանի Իրինդ գյուղում: Սասունցի գյուղացիները իրենց հատուկ ջերմությամբ հյուրասիրել ու պատվել էին Խաչակյանին: Եվ նորածին գառներից մեկի ականջին նշան էին արել, որ երբ մեծանա ու Վարպետը գնա գյուղ՝ խորոված անեն:

Եվ ահա մի օր ինձ մոտ է գալիս Խաչիկ Դաշտենցն ու ասում.

— Պետք է գնանք Վարպետի հետ Իրինդ՝ խորոված ուտելու: Ես երկար տարիներ աշխատել էի Թալինում, սիրել այդ աշխատասեր, սրտաբաց, անկեղծ ժողովրդին և սիրով համաձայնվեցի:

Գնացինք Վարպետին վերցնելու, սակայն նրան գտանք մոռյլ: Պարզվեց, որ կինը՝ տիկին Սոֆիկը, խիստ զայրացել էր և թույլ չէր տվել նրան տանից դուրս գալու:

— Դու, Ավո ջան, — ասում էր նա, — երեկվա 20 տարեկան երիտասարդը չես, որ մի փոքր խորովածի համար գնաս հասնես Արագածի փեշերը, էդ մտքիցդ հանիր, չեմ թողնի: Եվ շփոթեց:

Այդպես էլ այդ միջոցառումը ձախողվեց:

Գուցե լավ եղավ, ո՞վ գիտի:

Տարիներ են անցել, շատ բան է փոխվել, բայց մինչև հիմա էլ աչքիս առջև է մեր սիրելի, մեր անմոռանալի Վարպետը, բարի, անմեղ ժպիտը դեմքին, ձեռնափայտը ձեռքին:

Ամեն օր աշխատանքի գնալիս, երբ անցնում եմ նրա արձանի մոտով, ինձ թվում է հիմա կկանգնեցնի, բայց ավա՛ղ, միայն թվում է...

ԷԶԵՐ ՕՐԱԳՐԱՆՇՈՒՄՆԵՐԻՅ

27 մարտի 1950 թ.

Եկավ, մոռալ էր: Ամեն առիթով տրամադրությունը փոխվում էր և՛ դեպի լավը, և՛ դեպի վատը: Այս անգամ, ինչպես ինքը պատմեց, ճանապարհին հանդիպել էր մի մուրացկանի, որի պատճառով տրամադրությունը վատացել էր: Նստեց, շունչ քաշեց, ծխախոտ վառեց և պատմեց Լոռվա սովորություններից, Թումանյանից, Դսեղի բնությունից: Բավական երկար նստելուց հետո վերկացավ, ձեռնափայտը վերցրեց և գնալուց առաջ ասաց.

— Է՛, ծնված օրից գնում ենք դեպի մահը, ամեն օր մահը մոտենում է, ընկել ենք անափ ծովը և գնում ենք:

Նրևի՛ նորից ինչ-որ բան էր ուզում ասել, երբ ներս մտան Արազին, Ար. Կարինյանը, Մկ. Արմենը, Ստ. Զորյանը: Ներսիսից հետ էլ մի քանի խոսք փոխանակեց և ծխախոտից ծուխ արձակելով դուրս գնաց:

6 ապրիլի 1950 թ.

Այսօր գրողների տան դահլիճում (Մարքսի փող.) տեղի ունեցավ Բոշյանի «գլուտին» նվիրված երեկո: Կատարյալ սենսացիա: Հետաքրքրությունն այնքան բուռն էր, որ դահլիճում տեղ չկար: Նիստին ներկա էին նաև Իսահակյանը, Դեմիրճյանը, Զարյանը, տողերիս հեղինակը և շատ ուրիշներ: Նիստը ղեկավարում էր Հրաչյա Քոչարը:

Ժողովից հետո գնում էինք Իսահակյանի, Դեմիրճյանի, Զարյանի, Քոչարի և «գլուտի» մասնագետ Գրիգոր Մուշեղյանի հետ: Իսահակյանը Մուշեղյանին հարցրեց այդ «գլուտի» նշանակության մասին: Նա ջանում էր, որ հասկացնի՝ չէր

ստացվում: Իսահակյանը նորից հարցրեց՝ ինչ նշանակութուն ունի այդ «գլուտը»: Մուշեղյանը պատասխանեց կարճ՝ «համաշխարհային»:

— Որ այդպես է, հանկարծ թուրքերին չտաք:

Որոշ ժամանակ անց պարզվեց, որ Բոշյանը ոչ մի նոր խոսք չի ասել, պարզապես աղմկարարություն էր և ուրիշ ոչինչ:

7 ապրիլի 1950 թ.

— Օրերը տաքանում են, տանը նստել չի լինում,— ներս մտնելով ասաց նա: Առանձին գործ չունեի, դուրս եկա մաքուր օդ շնչելու և մի փոքր զրուցելու: Տեսնում եմ զբաղված ես. դրսում էլ սպասողներ կան, մեքենա տուր գնամ: Քարտուղարուհուն խնդրեցի ուղեկցել մինչև մեքենան: Ձեռնափայտը մոռացավ ինձ մոտ, երբ մեքենան վերադարձավ, այն տուն ուղարկեցի: Տանից զանգահարեց. «Մերություն է, ինչ կարող ես անել»: Սա առաջին անգամ էր, երբեք չէի լսել, որ նա հիշողությունից գանգատվեր:

4 դեկտեմբերի 1950 թ.

Այսօր սաստիկ ցուրտ էր: Չնայած դրան, Ավ. Իսահակյանը բավական վաղ եկավ ինձ մոտ:

Իմ հարցին, թե այս ցրտին ինչպե՞ս է դուրս եկել, մանավանդ որ տկար է, պատասխանեց.

— Այո, հիվանդ էի, հիմա մի փոքր լավ եմ, ասի գնամ, մի քիչ թարմ օդ շնչեմ: Եվ կրկնեց իր սիրած խոսքը.— դե հավի թոխչքը մինչև մարագն է, իսկ գրողի թոխչքը՝ մինչև պետհրատ: Ծիշտն ասած չեմ փոշմանել, որ եկել եմ, մանավանդ, որ ճանապարհին մի սիրուն աղջիկ տեսա: Այդ ասաց և բարի աչքերով ժպտաց:

Այնուհետև երկար նստեց ու պատմեց, թե ցարական կառավարության օրոք քանի անգամ է սահման խախտել և ինչեր ասես, որ գլխով չի անցել: Շատ մանրուքներ էր հիշում: Հաճելի զրուցակից էր, ժամերով կարող էր պատմել: Գնացող եկողները, հեռախոսի զանգերը խանգարում էին, թե չէ օրը կավարտվեր և չէիր էլ իմանա ինչպես:

Այսօր անհամեմատ շուտ եկավ: Այդ պատահում էր այն ղեկավար, երբ անհանգիստ էր լինում: Տանից դուրս էր գալիս, մարդկանց հանդիպում և հանգստանում: Խոսք եղավ տեխնիկայի զարգացման մասին. նա ստաց, որ տեխնիկայի զարգացումը լավ է, բայց դժբախտաբար, այն միաժամանակ չարիք է մարդկության համար:

— Քանի որ եկել եք, ձեր հատորների հրատարակման պայմանագիրը ստորագրեք,— ասացի: Նա աչքի տակով նայեց պայմանագրի մեջ նշված գումարին, որն անցնում էր կես միլիոնից (այն ժամանակվա դրամով) և դառը ժպիտով ասաց.

— Էսքան փող ինչու՞ եք տալիս, գոնե սրա մի քառորդը տալին էն ժամանակ, երբ ես ջահել էի:

Առիթը բաց չթողեց և իր ջահելության օրերից շատ դեպքեր պատմեց:

Երբ ծխախոտը վառեց, հարցրի.

— Ի՞նչ կտալիք, եթե 40—50 տարով ձեզ ջահելացնեին:

— Ամեն ինչ,— պատասխանեց նա,— և՛ փառք, և՛ հարբստություն, և՛ անուն, կհամաձայնվեի համբալություն անել: Զահելությունը լավ բան է, բայց, դժբախտաբար, հենց ջահեաներն էլ նրա արժեքը չեն իմանում:

Երկարատև զրույցից հետո խոսեցինք ազգային ճաշերի, վայրի բանջարների օգտակարության, թթուների մասին: Այս թեման նրա թույլ տեղերից մեկն էր: Հաճույքով էր խոսում և հաճույքով պատմում: Նա խոսեց իր ծննդավայրի, Տեկոր գյուղի մասին, որտեղ նա եղել էր և որտեղից անցել էր իր Ուստա Կարոն... Աշխատանքը վաղուց վերջացել էր, երբ նրան ճանապարհեցի: Առաջարկեցի մեքենա՝ չհամաձայնվեց:

— Լավ է ոտքով գնամ,— մի փոքր թրամ օդ շնչեմ: Ամեն անգամ այդպես էր ասում, երբ ես նրան առաջարկում էի մեքենա նստել:

Զրույցում ենք Մարիետա Շահինյանի հետ, պայմանավորվում ենք նրա գրքի թարգմանության վերաբերյալ: Մեր զրույցի ժամանակ նա իմ ուշադրությունը հրավիրեց թարգմանություն-

ների (հայերենից-ռուսերեն) որակի բարձրացման վրա: Թարգմանիչները,— ասաց նա, ռուսաց լեզուն պետք է լավ իմանան և հայերենից ռուսերեն թարգմանված գործը պետք է ռուս ընթերցողին հաճույք պատճառի:

— Ես չեմ կարող չասել,— շարունակեց նա,— որ Հով. Թումանյանի գործերի թարգմանություններից այնքան էլ գոհ չեմ: Դա ինձ շատ է վշտացնում: Բացի դրանից... խոսքը կիսատ մնաց: Ներս մտալ Ավ. Իսահակյանը: Երկուսն էլ շատ ուրախացան, փաթաթվեցին այնպես, կարծես տասնյակ տարիներ իրար չէին տեսել: Նրանք երկուսով էլ հեռացան գրասենյակից և սկսեցին քաղցր զրուցել, ծիծաղել: Դժբախտաբար հնարավոր չէր գրի առնել նրանց զրուցքը:

Միայն ականջիս հասավ այն, որ խոսքը նորից գնում էր գրականության երակյալ թարգմանությունների (հայերենից ռուսերեն), այս կամ այն հեղինակի գործերի մասին և այլն:

12 փետրվարի 1951 թ.

Այսօր եկավ, անտրամագիւր էր: Նրա բարի դեմքը չէր կարողանում թաքցնել ամենաչնչին անախորժութիւնը: Նա նույնիսկ լուռ արտասւում էր, իրեն թվում էր՝ աննկատ: Իմ հարցին, թե ինչ է պատահել, նա պատասխանեց.

— Պատերազմի վտանգը քանի գնում ուժեղանում է. վախենում եմ ժողովուրդս աղետի մեջ ընկնի:

Ծնողները մտածում են երեխաների մասին, իսկ մեծերը՝ ժողովրդի մասին: Ես աշխատում էի նրան հանգստացնել և հեռու պահել այդ մտքերից, բայց նա ձեռքը մեկնելով դեպի Թուրքիա, ասաց.

— Էդ անօրենները, աստված ոչ անի, եթե մտնեն մեր հողը, կբնաջնջեն, մարդ չի մնա:

— Մեծ պետությունների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի, ղեկավարները մի՞թե չեն գիտակցում, որ խաղաղությունը կուտուրայի, առաջադիմության և բոլոր բարիքների ստեղծողն է, իսկ պատերազմը՝ մահ սփռող, ավերող և քաղաքակրթությունը ոչնչացնող ուժ է: Մարդկությանը, բոլոր երկրների ժողովուրդներին ի՞նչ է հարկավոր՝ միմիայն խաղաղություն:

Այդ թեմայի շուրջ երկար խոսեցինք: Եվ դեռ էլի կխոսեինք, եթե թափով ներս չմտներ Ն. Զարյանը: Մեր խոսակցությունն ընդհատվեց:

13 փետրվարի 1951 թ.

Այսօր եկա՛լ, ուրախ էր, երեկվա մոռյալ տրամադրությունը չբացել էր:

— Առանձին գործ չունեմ, երեկ քեզ մոտ եղած ժամանակքս սեղանի վրայից մատիտը սխալմամբ դրել եմ գրպանս, տարել եմ, եկա վերադարձնելու:

Ներկա եղողները ուրախ ծիծաղեցին և Վարպետի այդ ասածը համարեցին ուրախ կատակ:

5 հունիսի 1951 թ.

Երկար ժամանակ է չէր եկել: Մի քանի անգամ այս կամ այն առիթով ղանգահարել էր: Այսօր եկավ, շատ ուրախացա, բայց տրամադրությունը այն չէր: Նստեց մեկ ժամից ավելի, պատմեց իր շրջագայությունների մասին: Երբ նա պատմում էր, իրեն լավ էր զգում, ես էլ հաճույք էի ստանում: Երբ մի քիչ թեթևացավ, տրամադրությունը մի փոքր լավացավ, պահանջեց, որ մի քանիսին աշխատանքի նշանակեմ:

— Ի՞նչ անեմ,— ասում էր,— հանգիստ չեն տալիս: Գիտեմ, քեզ համար էլ դժվար է, բայց ի՞նչ անեմ:

— Մեկ-մեկ մտածում եմ,— շարունակեց նա,— գլուխս առնեմ, գնամ: Երբ խնդրում են և այն էլ հացի փող աշխատելու համար, խիղճս տանջում է, հասկանո՞ւմ ես, սիրելիս, խիղճս տանջում է: Արդեն եղանակները տաքանում են, մրտածում եմ մի երկու ամսով գնամ հանգստանալու և գուցե մի փոքր էլ աշխատելու:

Ասաց, վերկացավ, ձեռքս սեղմեց և գնաց:

Ամեն անգամ Վարպետը, երբ գալիս էր և գնում, ես նույնն էի մտածում. «Հայրեր կան, որ իրենց զավակների մասին չեն մտածում, իսկ Իսահակյանը բոլորի մասին է մտածում»:

Նկատվ ժպիտը դեմքին: Ամառանոցից նոր էր վերադարձել. հերևում էր լավ էր հանգստացել: Նստեց և սկսեց հարց ու փորձ անել՝ ի՞նչ նոր գրքեր են լույս տեսել, որոնք պատրաստ են տպագրության: Հետաքրքրվում էր ամեն ինչով և իրեն թվում էր, որ մեծ, շատ մեծ փոփոխություններ են եղել իր բացակայության ժամանակ: Երկար նստեց, ներից պատմեց իր ճանապարհորդությունների, իր անցկացրած լավ ու վատ օրերի մասին: Երկար պատմեց Իտալիայի կարգերից, ֆաշիստների բռնություններից:

ՄԵԾ ՎԻՊԱՍԱՆԸ

(Դերենիկ Դեմիրճյան)

Դերենիկ Դեմիրճյանի գրվածքները կարդացել էի, երբ աշակերտ էի: Տարիներ անց ոչ միայն մոտիկից ճանաչեցի, այլև մտերմություն հաստատվեց մեր միջև: Դա 1929 թվականն էր: Ես բանակից զորացրվել և ընդունվել էի Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Մի անգամ Աբովյան փողոցով իջնելիս ընկերներիցս մեկըն ասաց.

— Տղաներ, տեսեք, Դերենիկ Դեմիրճյանն է:

Նա զրոսնում էր իրենից հասակով ցածր, նիհար մեկի հետ: Ինչպես հետո ասացին՝ էղուարդ Խոճիկն էր: Մեկ տարի հետո, երբ ինձ աշխատանքի նշանակեցին ՀԼԿԵՄ Երևանի բաղկոմի կոմերիտմիության ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում (որպես բաժնի վարիչ), մենք հաճախ էինք հանդիպում գրական ժողովներում, հանդիսավոր նիստերում, մանավանդ, որ նման միջոցառումների մեծ մասը տեղի էր ունենում կոմերիտմիության նախաձեռնությամբ:

Նվազ աչքպիսի միջոցառումներից մեկի ժամանակ կըրկին հանդիպեցինք:

Քրդական այբուբենի ստեղծման տարեդարձի առթիվ պետքատրոնի դահլիճը լեփ-լեցուն էր:

Այդ երեկոյին հրավիրված էր նաև Դերենիկ Դեմիրճյանը:

— Արի՛, արի՛, — դիմեց ինձ, — արի մեր սեփական աչքե-

բով տեսնենք խորհրդային խշխանության նվաճումները: Քուրդ ժողովուրդը դարեր շարունակ եղել է խավարի մեջ, շունենու-
լով գիր ու գրականություն, աշտօր իր ուժերով, իր մայրենի
լեզվով ելույթ է ունենում մայրաքաղաքի բնում, սա հրաշ-
ք է, հազվագյուտ երևույթ:

Նա դեռ էլի ինչ-որ բան էր ուզում ասել, երբ բեմի վարա-
գույրը բացվեց: Սկսվեց ներկայացումը: Անշափահաս տղա-
յին ամուսնացնում են տարիքով շատ մեծ աղջկա հետ:

Տղան իր համար վեգ է խաղում, իսկ մեծերը սակարկում
են աղջկա գնի շուրջ: Ներս են մտնում կոմերիտականները և
խանգարում աչգ ստեղծարարը: Դահլիճը թնդում է ծափե-
րից:

Բեմի վրա տեսնում էինք քուրդ կնոջը, քուրդ աղջկան, հով-
վին, շեյխին, բեգին, աղային: Դերակատարները բոլորն էլ
քրդեր էին, մեծ մասամբ երիտասարդներ: Քրդերից մեկը, որ
նստած էր գրողի կողքին, թարգմանում էր դերասանների
խոսքերը և բացատրություններ տալիս: Երբ բեմի վրա երևաց
շեյխը, երիտասարդներից մի քանիսը թունդ հայհոյեցին: Լը-
սողները բաբձր ծիծաղեցին:

Երբ Դեմիրճյանը հասկացավ, թե ինչումն է բանը, ուրա-
խացավ և ասաց.

— Դա նույնպես նվաճում է, ատելություն շեյխի, բեգի-
նկատմամբ, իհարկե նվաճում է:

Ներկայացման մասնակիցները շատ ազատ էին զգում բե-
մի վրա: Նրանք խաղում էին այնպես, ինչպես իրականում
էին: Այդ մեծ ուրախություն էր պատճառում Դեմիրճյանին:

Նրեկոն, որը կազմակերպել էր քուրդ երիտասարդությունը,
ավարտվեց արտասանություններով և պարերով: Ղեկավարը,
որի անունը չեմ հիշում, մաքուր հայերենով ներկայացնում
էր այն բանաստեղծներին, որոնք հանդես էին գալիս իրենց
ոտանավորների արտասանությամբ:

Տպավորիչ էր մեկի բանաստեղծությունը, որը կոչ էր ա-
նում կարմիր գծից դուրս գտնվող քրդերին թոթափել խավա-
րի լուծը և միանալ կարմիր հոկտեմբերին: Դահլիճը թնդաց
փոթորկալի ծափահարություններից: Քիչ անց բեմ են բարձ-
րանում պարողները: Նորից թնդում է դահլիճը ծափահարու-
թյուններից, ուրախ բացականչություններից: Պարողները:

ոտքերն այնպէս ուժգին են հարվածում հատակին, որ թվում է, թե հիմա ուր որ է բեմը կքանդվի: Պարում են կանայք, աղջիկները, տղաները, արեւմտա երեսներով մեծերը: Պարում են տրեխներով, գունավոր գուլպաներով:

Իրենց տեղը հանգիստ նստել չեն կարողանում նաև հանգիստականները: Խանդավառութիւնը փոխանցվել էր դահլիճում նստածներին: Երբ դադարեց պարը, Դեմիրճյանը դարձավ ինձ.

— Տեսնու՞մ ես խորհրդային իշխանութիւնն ազգային քաղաքականութիւն հաղթանակը, քուրդ ժողովրդի հաղթանակը, այդ աշխատասեր և հյուրասեր ժողովրդի վերածնունդը: Այս երեկոն, — շարունակեց Դեմիրճյանը, — ես երբեք չեմ մոռանա և անպայման պետք է հռչակած գրեմ, թող բոլորն իմանան, նաև՝ մեր թշնամիները:

Երբ երեկոն վերաջացավ, քուրդ երիտասարդները շրջապատեցին Դեմիրճյանին: Անվանի գրողը հարց ու փորձ էր անում գյուղերից, չալսաներից եկածներին: Դեմիրճյանի այն հարցին, թի ոնց եք ապրում, ներկաները համարչա միաբերան պատասխանեցին. «Լավ է, ամեն բան լավ է, միայն այժմպէս բան է պակասում» (թատրոն, կինո, ակումբ): Դեմիրճյանը իր սովորութիւն համաձայն ժպտաց և հանգիստ պատասխանեց.

— Սիրելի բարեկամներ, ամեն ինչ միանգամից չի լինի, ազատութիւն ստացել եք, բեգերից ու շեյխերից ազատվել եք, ձեր հալալ աշխատանքի պտուղները վայելում եք, էլի ինչ ուզում եք, էն էլ կլինի, հերթով, կամաց, կամաց: — Այ, — շարունակեց նա, — քրդական տեխնիկումի ուսանողները կավարտեն-կգնան գյուղ և կկաղմակերպեն այդ բոլորը:

Այդ ժամանակ քուրդ երիտասարդներից մեկը մոտեցավ Դեմիրճյանին և ասաց.

— Ընկ. Դեմիրճյան, մեզ՝ քուրդ գրողներին, հարկավոր է օգնել: Իհարկե հարկավոր է օգնել, մենք բոլորս էլ օգնութիւն կարիք ունենք:

— Գրողների տունը ամեն ինչով ձեզ կօգնի, — դարձավ երիտասարդներին Դեմիրճյանը: Եկեք գրողների տուն, այնտեղ մարդիկ կան, որոնք խորհուրդներ կտան ձեզ:

Դեմիրճյանն իր խոստումը կատարեց: Նա ընդարձակ

«Տողված տպագրեց «Խորհրդային Հայաստան» թերթում, որը վերջանում էր այսպես.

«Քուրդ ընկերներ, եկեք գրողների տուն:

Գրողների տունը՝ ձեր տունն է»:

Մեծ գրողը մինչև իր կյանքի վերջը, հավատարիմ իր սկզբունքին, մնաց որպես քուրդ ժողովրդի լավագույն բարեկամը: Հիշում եմ շատ տարիներ հետո՝ 1950—1952 թթ., երբ Հայաստանի պետական հրատարակչության գիրեկտորն էի, նստած գրուցում էինք Ավետիք Իսահակյանի և Դերենիկ Դեմիրճյանի հետ, ներս մտավ գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Եղիշ Պետրոսյանը և խնդրեց 2 մամուլով ավելացնել քուրդ ընկերներից մեկի գրքի ծավալը: Ես թույլատրեցի: Երբ բաժնի վարիչը դուրս գնաց, Իսահակյանն ասաց.

— Լավ արեցիր, նրանց ամեն կերպ պետք է օգնել, լավ ժողովուրդ են:

Դեմիրճյանը նույնն ասաց և ավելացրեց.

— Այդ ժողովրդին պետք է օգնել, մենք բոլորս պետք է օգնենք: Մի քանի մամուլ եթե մեզանից պակաս լինի, մեծ բան չէ: Օրինակ, եթե Ն-ի հաստափոր վեպից մի 10 մամուլ կրճատեք, մենք ի՞նչ կկորցնենք, ոչինչ, ընդհակառակը կշահենք: Իսկ քրդերի համար երկու մամուլն էլ օգտակար է:

Այնուհետև դիմելով ինձ ասաց.

— Պետհրատը պետք է օգնի, որպեսզի քուրդ գրողների լավագույն գործերը թարգմանվեն ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն:

— Ճիշտ է,— համաձայնվեցի ես:

* * *

Ինչպես Ավ. Իսահակյանը, այնպես էլ Դերենիկ Դեմիրճյանը միշտ հիշում էին քրդերի հյուրասիրությունը: Ես, որ երկար տարիներ աշխատել էի Թալինում, շփվել նրանց հետ, լավ ծանոթ էի նրանց հյուրասիրությանը: Պատմեցի, թե ինչպես 1934 թ. մի քանի ընկերներով (կուսշրջկոմի քարտուղարը, գործկոմի նախագահը, միլիցիայի պետը և ուրիշներ), որոշեցինք բարձրանալ Արալ-առի գագաթը: Առավոտ շուտ ձի

նստած հասանք քրդերի օրհաները, որոշեցինք գիշերը մնալ ալգտեղ և մյուս առավոտյան ոտքով բարձրանալ սարը: Քրդերը մեզ դիմավորեցին եւրախ բացականչութուններով, կատակով: Նրանցից մեկն ասաց.

— Էս շրջանի ղեկավարութեանը որ գալերն ուտեն, մենք ի՞նչ պատասխան պետք է տանք:

Քրդերից յուրաքանչյուրը մի ձիու սանձ բռնեց: Դա նշանակում էր, որ այդ ձիու վրա նստածը նրա հյուրն է:

Շոգից ու տոթից փախած մենք զգում էինք ինչպես դրախտում: Չորս կողմը սառնորակ աղբյուրներ, բուրավետ ծաղիկներ, փարթամ բուսականութուն, թռչունների երգ: Մինչև լվացվեցինք, մեզ կարգի բերեցինք, հրավիրեցին ճաշի: Սըփոոց փռեցին վրանի մեջ և վրան լցրին տարբեր ուտելիքներ՝ կաթի սեր, մածոն, կարագ, պանիր, ոչխարի մսից խաշվածա և թիթեղի վրա թխած հաց: Տանտերը մեզ ոգևորում էր. «Կերեք, էս ուտելիքները,— ասում էր նա,— ո՛չ շրջկենտրոնում և ո՛չ էլ քաղաքում չեք ճարի, կերեք»:

Մեր ընկերներից մեկը, որ ախորժակով ուտել գիտեր, թեքվեց դեպի ինձ և կամացուկ ասաց.

— Եկեք ամեն շաբաթ Արագած բարձրանանք:

Հենց այդ ընկերն էլ Արագածի գագաթին չհասավ, իր պարտ մարմնի պատճառով:

«Վարդանանքն» էր տպագրվում, Դեմիրճյանը հաճախ էր լինում պետհրատում, սովորաբար առավոտյան ժամերին, 10-ից հետո: Մի անգամ էլ, 1950 թ. մարտի 24-ին, իր սովորական ժամին ներս մտավ, տեսավ երաժիշտ Նիկողայոս Տիգրանյանին ինձ մոտ նստած: Դիտարկը կախելուց հետո, բավական բարձր ասաց.

— Հարգանքներս, Նիկողայոս Ֆադեևիչ:

Տիգրանյանը մի փոքր թեքվեց դեպի Դեմիրճյանը և ասաց.

— Էդիկ ինչխոր Դերենիկի ձայնը լինեք (չէր տեսնում):

— Այո՛, այո՛, ես եմ, Դերենիկը, ձեր երկրպագուն, մեծ սիրահարը: Շուտով և հոգովածներով, և ռադիոյով հանդես եմ գալու և գովելու ձեր արվեստը, թեև ես ձեզանից նեղացած եմ:

Տիգրանյանը զարմացած հարցրեց.

— Ինչու՞, Դերենիկ, ինչու՞ ես նեղացել:

— Չե՞ք հիշում, երբ ես 7 տարեկան էի, եկա երաժշտական դպրոց ընդունվելու, ինձ քննեցիր և... կտրեցիր:

— Էն նեմեցի հետ եկողը դու՞ էիր:

— Այո՛, ես էի:

— Է՛, լավ եղավ, որ կտրվեցիր, եթե չկտրվեիր, շատ վատ երաժիշտ պետք է լինեիր, իսկ հիմա, փառք աստծո, ճանաչված գրող ես, գրչի վարպետ: Հիմա մեր ժողովրդին ավելի շատ օգուտ ես տալիս, քան եթե երաժիշտ դառնայիր:

* * *

Դեմիրճյանը ծանր հիվանդ պառկած էր առաջին հիվանդանոցում: Մոսկվայից Երևան էր եկել անվանի ֆիզիոլոգ Էդրաս Հասրաթյանը: Լսելով վիպասանի հիվանդության մասին, ցանկացավ այցելել նրան:

Առավոտյան ժամը 11-ին Հասրաթյանը և ես գնացինք հիվանդանոց. անշափ դուռնաւ էր: Հասրաթյանի այցը նրան ուրախացրեց, և նա սկսեց պատմել իր ցավերի մասին, իսկ մենք գիտեինք, որ ցավն անբուժելի է և ոչինչ անել հնարավոր չէ:

— Դերենիկ Կարպովիչ, ինչպե՞ս է ձեր ախորժակը, — հարցրեց Եդրասը:

— Որ ճիշտն ասեմ, ոչ մի բանի ախորժակ չունեմ, մանավանդ հիվանդանոցի ճաշերից ոչ մեկն ինձ դուր չի գալիս, այ, եթե լիներ ավելուկ, բոխի, սիրով կուտեի:

Ես շատ ուրախացա, երբ լսեցի, որ վիպասանի ուզածն ավելուկն ու բոխին է, որովհետև այդ ուտելիքները միշտ, ամբողջ տարին, մեր տանը լինում էր: Մեր տունը հիվանդանոցի դիմացն էր: Շտապեցի տուն, բերեցի բոխին և ձեթով պատրաստած ավելուկը: Եվ երբ ուտելիքները դրեցի սեղանին, նա նայեց և զարմացավ:

— Այ տղա, քո ձեռքին մոգական զավազան կա՞ր, — ասաց նա, — ինչ որ ուզում ենք, անմիջապես բերում ես:

— Վաղը նորից կբերեմ, — ասացի:

Իմ բացակայության ժամանակ Հասրաթյանը մի շարք խորհուրդներ էր տվել և՛ հիվանդին, և՛ բուժող բժշկին: Մենք առողջություն մաղթելով դուրս եկանք՝ հաջորդ օրը նորից այցի գնալու խոստումով: Հաջորդ օրը, նույն ժամին, նորից այ-

ցելեցինք Դեմիրճյանին, այս անգամ նրան գտանք բավական ուրախ տրամադրությամբ մեջ: Մեր բարեն առնելուց հետո, նա դարձավ ինձ:

— Այ տղա, դու կարգին բժիշկ ես, ավելուկն ու բոխին ուտելուց հետո ես ինձ լավ եմ զգում:

Մենք գլխելինք և հասկանում էինք, որ այդ ամենը խաբուսիկ, ինքնահանգստացում է: Բոխին և ավելուկը մի քանի օր օգնեցին, որից հետո նա դարձյալ ընկավ տառապանքների մեջ: Դեկտեմբերյան մի խստաշունչ օր լմացանք, որ վախճանվել է մեծ գրողն ու հնօրյա բարեկամս:

* * *

1953 թվականին «Գիտելիք» ընկերության հերթական համագումարն էր: Դերենիկ Դեմիրճյանն ընտրված էր համագումարի պատգամավոր: Երբ նրան ուղարկեցինք իր մանդատը, նա ինձ մի երկտող գրեց.

«Սիրելի խնկանոս.

Շատ ցավում եմ, որ հին հիվանդությունս նորոգվեց, և ես գալ չեմ կարող:

Երբ հարկ լինի, ես կարող եմ խոսքս գրել և ուղարկել այդտեղ կարգալու:

Կամ հոգված կգրեմ համագումարի խնդիրներից մեկի մասին.

Շատ ցավում եմ:

Ջերմ բարեններով՝ Դ. Դեմիրճյան»:

Գրությունը ցույց է տալիս, թե ինչքան բարեխիղճ էր: Առողջության վիճակը վատ էր և չէր կարող ներկա լինել համագումարին, բայց ուզում էր մասնակցել՝ թեկուզ գրավոր:

«Վարդանանքը» լույս տեսնելուց որոշ ժամանակ անց, Դեմիրճյանը եկավ պետհրատ:

— Եկել եմ խնդրելու, որ ինձ մեկ օրինակ «Վարդանանք» տաս: Ես ամաչելով ասացի, որ չեմ կարող բավարարել խընդրանքը, որովհետև շունենք և ավելացրի, մեզ մոտ պահվում է միայն 5 օրինակ, որպես անձեռնմխելի ֆոնդ:

— Ափսոս,— ասաց նա,— շատ անհրաժեշտ է և ժպտալով
աւելեացրեց.

— «Ամենաբախտավոր» հեղինակը Ա-ն է, որ գրախա-
նութը ուզում ես մտիր, ինչքան ուղես նրա գրքերից կան:

Մարդ պետք է Ա-ի բախտն ունենա:

Ազիզբեկովի հրապարակի մոտ, ուր տեղաւորված էին
«Սովետական Հայաստանի» և «Աւանգարդի» խմբագրու-
թյունները, կար նաև սրճարան (նկուղային հարկում): Գրող-
ներն իրենց ազատ ժամերը մեծ մասամբ այդտեղ էին անց-
կացնում: Նա այն ժամանակ աշխատում էի «Աւանգարդում»
և հաճախ էի լինում սրճարանում, որտեղ հանդիպում էի մեր
անվանի գրողներին և մտաւորականներին:

Հիշում եմ, մի անգամ, Խաչիկ Դաշտենցը, Դերենիկ Դե-
միրճյանը և ես նստած սուրճ էինք խմում, երբ ներս մտաւ
գրողներից մեկը, որին, ինչպես հետո իմացա, չէր սիրում
Դերենիկ Դեմիրճյանը: Բարեկեց հետո հարցրեց:

— Կարելի՞ է Ձեզ ընկերանալ:

— Իհարկե կարելի է, խնդրեմ,— նստեք,— աթոռ առա-
ջարկելով ասացինք մենք: Նա հանեց գլխարկը և էս ու էն
կողմ էր նայում՝ տեղ էր փնտրում կախելու համար: Այդ պա-
հին Դեմիրճյանը դիմելով նրան՝ ասաց.

— Դիր գլխիդ, զրանից լավ կախելու տեղ չես ճարի:

Երբ տրամագրությունը տեղն էր և առիթ էր լինում՝ մի-
որեկ հետաքրքիր և զվարճալի բան էր պատմում: Այսօր խոսք
բացվեց թաղման ծիսակատարությունների, հատկապես քե-
լեխի մասին: Նա պատմեց Թրիլիսիի սովորութիւններից:

— Այնտեղ,— ասաց նա,— քելեխ ուտողների հատուկ
խմբեր կային, որոնք ոչ մի տեղ չէին աշխատում և ապրում
էին աղայի պես: Նրանք նայում էին օրվա թերթերը, ստու-
գում՝ թե ով է մեռել, ունեոր է, թե՛ աղքատ, որից հետո ծա-
նոթանում էին հանգուցյայի անցյալին, կենսագրական տըվ-
յալներ հավաքում, գնում էին թաղման և ապա մեռնողի տու-
ներ՝ քելեխ ուտելու: Նրանք այնքան էին «մասնագիտացել ի-
րենց շաղկատանության մեջ, որ մեռելատանը ճառեր էին ա-
սում, գովում հանգուցյալին, բնավորության գծերից պատմում
և իհարկե ուտում ու խմում: Ոչ ոք չէր կասկածում... Եվ ահա

այդ ուտել-խմելու ժամանակ, երբ ներկաներից մեկը կորցնում է խմելու շափը, բաժակ է բարձրացնում և դիմելով հանգուցյալի բարեկամներին, ասում է.

«Ձեր կենացը, ցանկանում եմ այսպիսի հանդիպումներ հաճախ ունենանք»:

Կային նաև այդպիսի խմբեր, որոնք հարսանիքներին էին մասնակցում, նույնիսկ թամաղա լինում: Եվ ուրախության մեջ ոչ ոք զլխի չէր ընկնում, աղջկա բարեկամները կարծում էին, թե տղայի բարեկամն է, տղայինը՝ աղջկա: Եվ այդպես ուտում-խմում, ման էին գալիս: Բա՞, սիրելիս, այդպիսի բան էլ կա:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՕՐԱԳՐԱՆՇՈՒՄՆԵՐԻՑ

18 մարտի 1950 թ.

Այսօր Դերենիկ Դեմիրճյանը բարձր տրամադրությամբ եկավ պետհրատ. երբ հարցրի՝ ինչպե՞ս է առողջությունը, ժպտալով պատասխանեց. «Իմ հասակի մարդիկ քիչ կան, բայց ես չեմ մեռնի, մինչև կոմունիզմը չհաստատվի»: Այնուհետև երկար խոսեցինք և պայմանավորվեցինք «Վարդանանքի» հրատարակության շուրջ: Երբ վեր կացավ գնալու, նորից կրկնեց. «Չմոռանա՜ս ասածս»: «Ես չեմ մեռնելու, մինչև կոմունիզմը չհաստատվի»: Սրտանց ուրախացա, որ տրամադրությունն այդքան լավ էր:

21 մարտի 1950 թ.

Դեմիրճյանը եկավ պետհրատ, բարի լույս ասելուց հետո, նստեց:

— Սիրելի խնկանոս, եկել եմ մի խնդրանքով:

— Ինչո՞ւ եք խնդրում, պահանջեք:

Եվ խնդրեց գրողներից մեկին աշխատանք տալ: Խոստացա: Վեր կացավ, ուրախ ժպիտը դեմքին դուրս գնաց: Կարծես մեջքից մի բեռ ընկավ: Մեծ մարդիկ, մեծ գրողները միայն իրենց ցավերով և հոգսերով չեն ապրում, նրանց հոգսը նաև մարդկանց հոգսն է:

14 ապրիլի 1950 թ.

Այս առավոտ Դեմիրճյանը բերեց «Վարդանանքի» սևագրությունը, թերթեցինք:

Նա հարցրեց.

— Քանի՞ մամուլ պետք է տպագրենք:

Ես պատասխանեցի՝ «քանի մամուլ գրենք, ոչ մի սահմանափակում: Միայն ինչքան հնարավոր է արագացրենք»: Նա, որպես պետհրատի գեղարվեստական խորհրդի անդամ, գիտեմ, որ պլանները կազմելիս երկար խոսք էր գնում այն մասին, թե որ հեղինակը քանի մամուլ իրավունք ունի: Այդ առիթով սկսվում է դիմումների, բողոքների տարափ, զանգեր, զանգեր...

18 ապրիլի 1950 թ.

Եկա՛վ, բարեկեց և նստեց:

Մի փոքր շունչ քաշելուց հետո ասաց. «Մարդ, որ հոգի չունենա, ինչքան ասես կապրի: Նորից եմ եկել խնդրելու, որ Ն-ին մի գործ տաս, կարիքի մեջ է»: Խոստացա: Վերկապվեց, որ գնա, փռշտանեց. նորից նստեց:

«Ես քիչ առաջ ասացի, որ մարդ, երբ հոգս չունենա, հա՛կապրի, բայց մի բան պակաս թողի: Երկար ապրելու համար «գաղտնիք» էլ կա, և ժպտալով ավելացրեց, որը, բացի իրենից, ոչ ոք այդ չգիտի: Մի անգամ Մոսկվայից և Լենինգրադից եկած մի խումբ բժիշկներ եկան ինձ մոտ և հարց ու փորձ էին անում իմ ապրելակերպի մասին, իհարկե, ծիծաղ առաջացնող հարցեր էին, բայց ես սիրով պատասխանում էի:

Նրանք թե՛ մսեղեն շա՛տ եք գործածում:

— Շատ,— ասացի: Առանց խորովածի կլինի՞, դուք ասեք:

— Ոգելից խմիչքներ գործածո՞ւմ եք:

— Իհարկե, էդ ո՞ր խորոված և խաշ ուտողը օղի կամ կոնյակ չի խմի:

— Ծխո՞ւմ եք:

— Այո՛, շատ վաղուց և հիմա էլ եմ ծխում:

— Իսկ կենցաղում ինչպիսի՞ն եք եղել:

— Շատ լավ, ինչպես համարյա բոլոր տղամարդիկ: Ընտանիքը սրբութուն է, պետք է պահել աչքի լույսի պես, բայց... նրանք միտքս հասկացան և ծիծաղեցին:

— Հիմա ինչպե՞ս եք զգում,— հարցնում են ինձ:
Երբ ես պատասխանեցի, թե լավ եմ զգում, նրանք հարց-
քին:

— Իսկ ինչո՞ւ եք բացատրում:

Պատասխանեցի, որ մի «գաղտնիք» կա մինչև հիմա ոչ
որի չեմ ասել, իսկ Ձեզ՝ կասեմ: Եթե մարդ ուզում է երկար
ապրել (դա միայն տղամարդկանց է վերաբերում), իր կնոջ
հետ երբեք չպետք է վիճի: Կնոջ հետ վիճելը անիմաստ է,
անօգուտ և տղամարդկանցից շատերը իրենց առողջությունը
քայքայում են այդ պատճառով: Միշտ համաձայնվեք կնոջ
ասածին:

Զրուցակիցներս ծիծաղեցին:

21 հուլիսի 1950 թ.

Այսօր «Վարդանանքը» բերեց: Տրամագրությունը բարձր
էր:

— Շարունակ պահանջում էիր, թե բեր, հա բեր, ահա
բերեցի: Հիմա պահանջելու հերթն իմն է: Շատ-շատ վող
տուր, գնամ ման գամ, հանգստանամ:

Նա միաժամանակ ուզում է մեքենա գնել, երբ ես ասացի,
որ մեքենան գլխացավանք է, նա առարկեց՝ «Մեքենան կըն-
վիրեմ վարորդին, որ մեկ-մեկ էլ ինձ ման ածի...»

Այնուհետև ծիծաղելով, ավելացրեց կատակով: «Գի-
տեմ մեքենա ունենալը գլխացավանք է, ավելի հեշտ է եր-
կու-երրեք սիրուհի պահել, քան մեքենա, բայց միևնույն է,
որոշել եմ, պետք է առնեմ»: Իհարկե շտապ:

12 օգոստոսի 1950 թ.

Այսօր մոտ 3 ժամ միասին կարդացինք «Վարդանանքի»
այն հատվածը, որը վերաբերում էր Վրաստանին: Նա այն
միտքն էր գրել, որ այդ ժողովուրդն էլ է մասնակցել Վարդա-
նանց պատերազմին:

Ես հետաքրքրվեցի, թե պատմական ի՞նչ աղբյուրներ կան
այդ մասին:

Նա ժպտաց...

Ներս մտալ Ստեփան Զորյանը և մեր զրույցն բնագծա-
վեց:

17 օգոստոսի 1950 թ.

Այսօր սովորականից շուտ եկավ: Ամենօրյա ժպիտը չը-
կար դեմքին: Հարցրի, ի՞նչ է պատահել, վա՞տ է գզում:

— Շնչել չեմ կարողանում,— պատասխանեց, օգը կեղ-
տատվել է, և ձեռքը մեկնելով ղեպի Կանազի * կողմը, ավե-
լացրեց՝ այնտեղից է գալիս: Կիսովոզսկ գնալու որոշումը
չէր փոխել:

Երբ իր որոշման մասին ասաց, ես նորից նրան հիշեցրի,
որ այնտեղից վերադառնալը շատ դժվար է և գլխացավանք,
հաճախ մարդիկ շաբաթներով տոմս չեն հարում (այդ մա-
սին ես շատ էի լսել): Նա ժպտալով պատասխանեց. «Ոչինչ,
տոմս չեղավ, բո տված փողերի վրա կնստեմ կգամ»: Այդ
խոսքերից հետո համոզվեցի, որ նրա որոշումը վերջնական
է, ուստի կարգադրեցի հաշվապահին նրան փող տալ ուղածի
չափ: Ստացավ բավական մեծ գումար, ձեռքս ամուր սեղ-
մեց, մնաս բարով ասաց և գնաց:

— Երբ փողի կարիք ունեցա, կհեռագրեմ, կուղարկեմ
հեռագրով:

Խոստացա:

Շատ չէր անցել նրա գնալուց, երբ քարտուղարը ներս մը-
տալ՝ Դեմիրճյանի հեռագիրը ձեռքին: Հեռագրում ասված էր.
«Դրամի կարիք ունեմ, խնդրում եմ մի քանի հազար ուրլի»:
Զարմացա. «Այդքան գումար, որ հետը տարել էր, ե՞րբ է
ծախսել»: Ինչ կարող էի անել, ուղարկեցի պահանջված գու-
մարը: Չէր անցել մեկ շաբաթ, երբ մի երկտող ստացա. «Սի-
րելիս, դու չե՞ս մտածում, որ ես կոպեկ չունեմ, փող ուղար-
կիր»:

Գումար ուղարկելը դժվար չէր, իրեն հասանելիքը Երևա-
նում է ստացել թե՛ Կիսովոզսկում, նույնն էր, իմ հոգսը
ուրիշ էր: Այդքան հաճախ և այն էլ մեծ գումար, որեւէ մեկի-
ուշադրությունը չէ՞ր գրավի և չէի՞ն վնասի նրան:

Այդ միտքը ինձ հանգիստ չէր տալիս, և ես ձգձգում էի

դրամի ուղարկելը: Եվ շուղարկեցի: Անցան օրեր և ահա մի օր գրասենյակի դուռը բացվեց և շեմքում երևաց նրա շորուկ, բարձրահասակ կերպարանքը. «Ուրեմն այդպես, կեսկատակ, կեսլուրջ տասց նա,— պետհրատի շիրեկտորը իմ հասանելիքն ինձ չի տալիս, և ես օտարութեան մեջ ուրիշից եմ պարտք վերցնում»: Բարվոք համարեցի լռել և ոչ մի խոսք չտասցի: Նա հասկացավ, որ ինձ հանցավոր եմ ճանաչում, ժպտաց և ասաց.

— Ոչինչ, մի կերպ յուր գնացի:

Հաշտվեցինք, և զրուցեցինք երկա՛ր, երկա՛ր: Պատմեց, որ լավ է հանգստացել:

— Այդ երևում է Ձեր դեմքից, ջահելացել եք առնվազն 20 տարով,— ասացի ես:

Շատ ուրախացավ, ես ավելի ուրախ էի, որ հաշտութեամբ վերջացավ ամեն ինչ:

29 սեպտեմբերի 1950 թ.

Եկավ, ուրախ-ուրախ բարեկեց և նստեց: Տրամադրութեամբ շատ բարձր էր: Իմ այն հարցին, թե ուրեմն լավ հանգրստացա՞ք, պատասխանեց.

— Շատ լավ, գերազանց: Այնքան լավ հանգստացա, որ երկու-երեք տարի բավական է: Այդ տարիներն էլ բավական են մի նոր վեպ գրելու համար:

Այսօր Ստեփանի (Զորյանի) 60-ամյակն են նշելու, պետք է գնանք:

— Դե՛, իհարկե, պետք է գնանք,— ասացի ես և ավելացրի,— բայց չի երևում, որ 60 տարեկան է, ավելի ջահել է երևում:

— Դե՛ քոլեցիները բոլորն էլ համարյա իրենց տարիքից փոքր են երևում: Համ էլ նա ուրախ մարդ է, վիշտը իրենից վանում է:

Գնացի Ստեփան Զորյանի 60-ամյակին նվիրված երեկոյին: Նախագահութեւնում էին Ավ. Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Սիմակը, Ն. Զորյանը, Մ. Սարյանը, Վաղ. Վաղարշյանը, Գ. Սարյանը, Սիրասը, Գ. Բորյանը և ուրիշներ:

Հր. Քոչարը բացման խոսքում համառոտակի ուրվագծեց Ստ. Զորյանի անցած 40-ամյա գրական գործունեության ուղին: Ընդարձակ զեկուցումով հանդես եկավ էդ. Թոփչյանը, որից հետո հոբելյարին ողջունեցին Մկ. Մկրչյանը, Գ. Սևունցը, Գ. Սմբյանը: Պատասխան խոսքում Ստ. Զորյանն ասաց, որ իրեն շատ գովեցին, շատ լավ և բարի խոսքեր ասացին, հաճախ էլ ավելին, քան պետք էր:

— Իմ մասին խոսողները մոռանում են մի բան, որ ես արդեն 60 տարեկան եմ: Դա այնքան էլ հաճելի բան չէ:

7 դեկտեմբերի 1950 թ.

Այսօր, առավոտյան շուտ, զանգահարեց և հեռաբլրերվեց «Վարդանանքի» նկարազարդումներով: Զանգահարեցի նկարչին՝ Իսաբեկյանին և խնդրեցի, որ զնա Դեմիրճյանի մոտ: Ինձ ասացին, որ Դեմիրճյանը նկարազարդումները նայել և շատ է հավանել: Երբ «Վարդանանքը» լույս տեսավ, բազմաթիվ լավ և ջերմ խոսքեր լսեցի շնորհալի նկարչի հասցեին:

29 դեկտեմբերի 1950 թ.

Սունդուկյանի անվան պետական թատրոնում հավաքվել էր մեծ բազմություն՝ նշելու Նաիրի Զարյանի ծննդյան 50-ամյակը: Գրողներ, արվեստի և մշակույթի գործիչներ, ուսուցիչներ, կուսակցական, սովետական աղարատի աշխատողներ, եղբայրական հանրապետություններից ժամանած հյուրեր:

Նախագահության սենյակում էին Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Հր. Քոչարը, Հովհ. Շիրազը, Մկ. Մկրչյանը, Աս. Ասատրյանը, էդ. Թոփչյանը, Սարմենը, Սիմակը, Հար. Մկրտչյանը, Գ. Սևունցը, Վ. Համազասպյանը և ուրիշներ:

Երեկոն հակիրճ խոսքով բացեց Դերենիկ Դեմիրճյանը: Նաիրի Զարյանին բնութագրեց որպես հայրենաշունչ, ինտերնացիոնալիստ պոետ-տրիբուն, որը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ շատ բարձր հնչեցրեց իր քնարը:

Զեկուցումով հանդես եկավ Հար. Մկրտչյանը:

Զեկուցողը Նաիրի Զարյանին բնութագրեց որպես սովետական կարգերում աճած տաղանդավոր բանաստեղծի:

Հորեկյարին ողջունեցին Հր. Քոչարը, Մհեր Աբեղյանը, Սիմակը, էդ. Միրզոյանը, Աս. Ասատրյանը, Վ. Մկրտչյանը, Վաղ. Վաղարշյանը, պիոներ-դպրոցականները և ուրիշներ: Ողջունի հեռագրեր էին ստացվել բոլոր եղբայրական հանրապետություններից:

Վերջում խոսք ասաց Նաիրին: Նրա խոսքը հուզիչ էր, տպավորիչ և խոսելիս շատ էր հուզվում:

— 25 հունվարի 1951 թ.

Այսօր հրավիրեցի պետհրատի գեղարվեստական խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ քննության առանք գրքերի, հատկապես գեղարվեստական գրքերի ձևավորման հարցը: Ներկա էր ավելի քան հարյուր մարդ: Շատ օգտակար առաջարկություններ եղան:

Ելույթ ունեցան նաև Դերենիկ Դեմիրճյանը և Ստեփան Զորյանը: Իսահակյանն այս կամ այն խոսողի ասածին հավանություն էր տալիս, կամ հակառակը, անընդհատ ծրխում էր: Օգը բավական ծանրացել էր: Դեմիրճյանը վեր կացավ, ընդհատեց խոսողին և առաջարկեց ծխելը դադարեցնել, ձեռքը մեկնելով դեպի Իսահակյանը: Բոլորը ծիծաղեցին: Ծիծաղեց նաև Իսահակյանը, առանց ծխախոտը մարելու:

Խորհրդակցությունը վերջացավ գիշերվա ժամը 1-ին:

31 մայիսի 1951 թ.

Այսօր եկավ սարսավիելի զայրացած, հրեհ նրան այդպես չէի տեսել: Հարցրի՝ ի՞նչ է պատահել:

— Էլ ինչ պիտի պատահի, Բաբվի «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագիրը, այդ Վասակը, համագումարում ելույթ է ունեցել և ասել, որ Հայաստանում հրատարակվել է Բաֆֆու «Կայծերը», դրանով իսկ աղգային ատելություն առաջացնելով նրիււ ժողովուրդների՝ հայերի և ադրբեջանցիների միջև:

Խմբագրի այդ ելույթը, որը տպվել էր «Կոմունիստում» (Բաբվի), որին ես ծանոթ չէի, իրոր զայրացուցիչ էր:

Ինչքան հնարավոր էր, հանգստացրի, խոսեցի այլ հար-

յերի մասին: Վերջում կարծես թե մի փոքր հանգստացալ: Իրո՞ք հանգստացալ, թե ցույց էր տալիս, դժվար էր կռահել:

ԲՈՅԱՇՈՒՆՉ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Նաիրի Զարյան)

Նաիրի Զարյանը Հայաստանի խորհրդայնացումը դիմավորեց քսան տարեկան հասակում և սովետական իշխանության առաջին իսկ օրից նվիրվեց ժողովրդին ծառայելու մեծ գործին:

Դժվար է եղել Ն. Զարյանի և նրա սերնդի անցած ուղին: Այդ սերունդը անցել է գաղթի, սովի, համաճարակների, ցեղասպանության ճանապարհներով և հանգրվան գտել Սովետական Հայաստանում:

Տարիների մեջ հասակ առալ, աճեց և առնականացավ բրբանոցից գրական միջավայր բնկած բանաստեղծը:

Բանական թվականներին ձևավորվեց քաղաքացիական ուժեղ լիցք ունեցող նրա քնաբերգությունը: Բնատուր տաղանդի հետ, համարձակ, որոնող անհանգիստ Նաիրին 30-ական թվականներին կանգնեց սովետահայ գրականության առաջատարների շարքում, խորապես կապվելով կյանքի հետ, գրողի և քաղաքացու իր ամբողջ եռանդը, բանիմացությունը, քարոզչի խոր համոզվածությունը ներգնելով նոր կյանքի կառուցման բարդ, դժվարին, հերոսական աշխատանքում:

Հայրենական պատերազմի տարիներին հնչեց նրա ահեղագուշ ձայնը: Նա տրիրուն էր, մեծ հայրենասեր, ինտերնացիոնալիստ: Զարյանի ստեղծագործությունը ոգեշնչում էր ռազմաճակատի մեր մարտիկներին: Նա համապետական շահերով ապրող բանաստեղծ-քաղաքացի էր, խիզախ մարտիկ: Նրա տարերքը ժողովուրդների հղրայրության զովքն էր, սոցիալիզմի նվաճումների փառաբանությանը նվիրված ձոն, հայրենասիրության գովերգում:

Նաիրի Զարյանը ստեղծեց գրական հոգևոր արժեքներ («Ձայն հայրենական», «Արա Գեղեցիկը», «Հացավանը»), որոնք մտան սովետական բաղմազգ գրականության ոսկե

Ֆոնդը և Բարգմանվեցին բազմաթիվ լեզուներով: Ն. Զարյանը բազմաթիվ լեզուներով կապված էր ժողովրդի հետ, սրբապետանց ուրախանում էր նրա ամեն մի հաջողության համար: Չեմ հիշում որևէ նշանավոր դեպք, որին ակտիվ մասնակցություն չունենար Զարյանը: Շրջում էր մեր շրջաններն ու դպրոցները, կրթոտ հոգևածներով հանդես գալիս:

Նաիրի Զարյանը մահացավ անժամանակ և նրա շատ ծրագրեր մնացին անկատար: Նա մեռավ հպարտ, գրիչը ձեռքին, մեռավ այնպես, ինչպես մեռնում են քաջերը՝ հրացանը ձեռքին:

Այդ է վկայում հիվանդանոցում մահվանից կարճ ժամանակ առաջ գրած նրա «Հրաժեշտի սաղմոս» բանաստեղծությունը:

«Մնաս բարով ասա կյանքին,

Մնաս բարով ասա:

Եվ մառացիր քո անթառամ այգին

Եվ ծառուղին քո այն ծովկորյա,

Որտեղ պիտի ձևեր քո երազի հերոսահին...

Բոլոր գալիք հրաշքներին

Ասա մնաս բարով

Եվ բարձրացիր քո նավը տիեզերագնաց:

Մնաս բարով ասա խոնարհարար

Քո բարեկամներին և թշնամիներին,

Բոլոր մարդկանց,

Որ անցնելու են այս ճանապարհով,

Քո ցավերին, հիվանդություններին

Եվ ինքդ քեզ, և ինքդ քեզ

Ասա մնաս բարով»:

Նա մեռավ ոչ թե մահացողի հուսահատությունամբ, այլ որպես ապրող ու ստեղծագործող պոետ:

Նաիրիի հետ մտերիմ ընկերներ էինք 1930-ական թվականներին:

Երկուսով անցել էինք գաղթի, սովի, զրկանքների ճանապարհներով, չնայած Նաիրին ծնվել է վաճառում, 1900-ին, ես՝ Ղարսում՝ 1905-ին:

Նաիրու ըմբոստ, անհաշտ բնավորությունը, մեր միջև եղած տարիքային որոշ տարբերությունները չէին խանգարում մեր մտերմությունը, որը շարունակվեց տասնամյակներ:

Մոտ քառասուն տարվա մտերմության ընթացքում շատ փոթորիկներ անցան մեր գլխով։ Այդ բոլորի մասին գրել հնարավոր չէ, ուստի որոշեցի թղթին հանձնել իմ հուշերից միայն մի քանի դրվագ։

Նվեր «Ի հիշատակ բարդ օրերի»

Հոգին խռովված էր։ Նկարագրել հնարավոր չէ, թե ինչ-բան հուզված էր։ Նախրի Զարյանի հուղմունքն ու զայրույթը լուրահատուկ էին, ոչ սովորական։ Այդ վիճակում էլ եկավ տուն։

— Չեմ հասկանում,— ասում էր նա,— թե ինչ է կատարվում։

Առանց հարցնելու ես հասկացա։ Անհատի պաշտամունքի տարիներին ո՞վ չէր հուզվում, ու՞մ հոգին խռովված չէր։

Հրաժարվեց որևէ բան ուտելուց։

Երբ մի փոքր հանգարտվեց, հարց ու փորձից իմացա, որ կասկածում է, թե իրեն էլ կարող են բանտարկել։ Ես հանգքստացրի, ասելով, որ դա անհնարին է, դա լինելու բան չէ, իզուր է հուզվում։ Նա ինձ առարկում էր.

— Ինչու՞ է անհնար։

— Ես,— ասում էր նա,— նրանցից ինչո՞վ եմ ավել։ Եվ թվում էր անունները։

Բավական երկար նստեցինք։ Երբ արդեն որոշ չափով հանգստացել էր, խորհուրդ տվեցի որոշ ժամանակով գնալ Մոսկվա։

— Այնտեղ,— ասացի նրան,— հանդիստ կղզաս և կըզբաղվես գրական գործերով։

Արդեն մթնել էր, վեր կացավ։ Մի երկու քաջ արեց դեպի դուռ, վերադարձավ, ծոցագրպանից հանեց լուսանկարը և կարմիր մատիտով գրեց՝ «Սիրելի ինկանոսին։ Ի հիշատակ բարդ օրերի»։ Այդ պահը ինձ համար մինչև այդ եղած ծանր պահերից ամենածանրն էր։ Այդ վիթխարի կամքի տեր մարդուն այդքան ընկճված չէի տեսել։

Տարիներ անց, անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո, կյանքը մտավ իր հունի մեջ։

Մեղ համար, սովետական ժողովրդի համար սկսվեց խաղաղ, ստեղծագործ աշխատանքի նոր շրջան։

նաղաղվեց և բուռն թափով ծավալեց իր գործունեությունը նաև՝ Նաիրի Զարյանը:

Հովհ. Բաղրամյանի մոտ

Նաիրի Զարյանը, կինը՝ Անժեյա Ստեփանյանը և ես 1950 թ. հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 15-ը եղանք Մոսկվայում և Ռիգայում:

Նաիրիի հետ ճանապարհորդելը մեծ հաճույք էր: Ասում էր, խոսում, ծիծաղում և ծիծաղեցնում: Մոսկվայում մեր պորժերը վերջացնելուց հետո մեկնեցինք Ռիգա: Այստեղ պետք է տպագրվեր «Հայկական մանրանկարչությունը»: Արդեն նոյեմբեր ամիսն էր, եղանակը խոնավ էր և ցուրտ: Հյուրանոցում տեղավորվելուց հետո, Նաիրին զանգահարեց Բաղրամյանին, որ այն ժամանակ այնտեղի ղորահրամանատարն էր:

Նաիրիի զանգից մի կես ժամ անց սենյակի դուռը ծեծեցին: Ներս մտավ մի թիկնեղ կապիտան: Զինվորականի բարեք տալուց հետո նա ասաց, որ իրեն գնեհրալ Բաղրամյանն է ուղարկել: Հյուրանոցի դռան մոտ կանգնած էին երկու մեքենա, մեկում՝ զինվորականներ էին:

Նրեքով նստեցինք մեզ ուղեկցող զինվորականի մեքենան, իսկ առջևից գնում էր մյուսը:

Բաղրամյանը ապրում էր սքանչելի գոյակում՝ թաղված սաղարթախիտ ծառերի մեջ, որը ժամանակին ինչ-որ կավածաարիոջ առանձնատուն էր եղել:

Իվան Քրիստափորովիչը մեզ դիմավորեց իր համակրելի և բարի ժպիտով և առաջնորդեց տուն:

Նստեցինք և սկսվեց հաճելի, հետաքրքիր զրույցը. Բաղրամյանը պատմում էր հաղթանակով տվարտված պատերազմից և հետաքրքիր զրավագներ վերհիշում իր զեկավարած զորամասերի գործողություններից: Մի քանի ժամ տևող զրույցը անցավ ակնթարթի պես և այդքան էլ ղեռ կշարունակվեք, եթե տիկին Բաղրամյանը մեզ ճաշի չհրավիրեր:

Մեր զրույցը շարունակվեց նաև սեղանի շուրջ, թեև թեման մի փոքր այլ էր: Խոսեցինք նահապետական ճաշերի, սովորույթների մասին: Հետո Նաիրին երգեց իր սիրած եր-

գը՝ «Մսկայ Միրզան»: Երգեց մեծ արվեստով, ի սրտէ: Բաղրամյանը, որը շունչը պահած լսում էր, բացականչեց. «Կեցցե՛ս, Նաիրի, ինձ մեծ հաճույք պատճառեցիր»: Նստեցինք մինչև իրիկնամուտ, ապա վեր կացանք, շնորհակալություն հայտնեցինք և դուրս եկանք: Իվան Քրիստափորովիչն ուղեկցեց մեզ մինչև մեքենան, նորից սեղմեց մեր ձեռքերը և սպաների ուղեկցութեամբ մեքենաները սլացան հյուրանոց:

Երկար, շատ երկար այդ հաճելի զրույցի տպավորության տակ էինք: Հաջորդ առաւոտյան ևս զբաղվեցի «Հայկական մանրանկարչության» արժանի տպագրության հարցով: Երբ տպարանի մասնագետը նայեց նկարներին՝ ասաց. «Ես Հայաստանի մշակույթի մասին և կարգացել, և լսել էի, բայց այսպիսի հրաշք չէի պատկերացնում: Կանեմ ամեն ինչ, որ պեսզի տպագրւթյունը լինի ժամանակին և որակով»: Նա իր խոստումը կատարեց: Յալում հմ, որ այդ բարեխիղճ մարդու ազգանունը մոռացել հմ, նա արժանի է մեծ հարգանքի և սիրո:

Մի քանի օր էր մնացել մեր տրամադրւթյան տակ, և մենք հաճույքով շրջում էինք քաղաքում, ծանոթանում լատիշների ազգային մշակույթին: Մեզ ապշեցնում էին նրանց եկեղեցիները: Կիրակի օրերին դրանք բազմամարդ էին լինում: Հավատացյալները նստած՝ ձեռքերին փոքրիկ ավետարան,՝ երգեհոնի երաժշտութեան տակ՝ աղոթում էին: Փողոցում զբոսնելիս, երբ լսում էին մեր խոսակցությունը, երբեմն կանգնեցնում և հարցնում էին՝ որտեղի՞ց եք եկել և ի՞նչ ազգ եք: Հարցերին պատասխանողը և զրույց սկսողը միշտ Նաիրին էր: Ես և Անժելան համարյա միշտ դիտողի դերում էինք:

Վերադառնում էինք հյուրանոց հոգնած ու ջարդված: Ռիդայի գրողները լսել էին Նաիրիի գալու մասին և կազմակերպեցին հանդիպում: «Դե, պատրաստվեք», — ասաց Նաիրին հրամայական տոնով, — գնանք, նրանք ճշտապահ ժողովուրդ են, մեզ համար ամոթ է, եթե ուշանանք, թեկուզ մեկ րոպե: Ես փորձեցի հրաժարվել. «Դուք երկուսով գնացեք, երկուսդ էլ գրող եք, ես որպէս ի՞նչ գամ, չեմ սիրում անկոչ

Հյուր լինել: Նաիրին համոզեց՝ գրող չես, բայց գրողների շրջանից ես, պետհրատի գիրեկտոր ես: Իրեն, միայն իրեն: հատուկ հրամայական տոնով այնպես ասաց, որ առարկություն տեղ չէր մնում: Ճիշտ ժամին եկան մեր հետևից:

Մեզ գիմալորեցին սրտաբաց և ուրախ: Նրանցից մեկը, որի անուն-ազգանունը դժբախտաբար չեմ հիշում, փաթաթվեց նաիրին և համբուրեց: Հին ծանոթներ էին:

Հանգիստումը և գրույցը տեղի ունեցան ճաշասեղանի շուրջ: Ուտելիքները բազմազան էին, մեծ մասամբ ձկնեղեն: Ամեն ինչ առատ էր, բացի հացից: Նաիրին դուր չեկավ. լըրացուցիչ հաց պահանջել անհարմար էր, պետք է հաշտվեիր: Տանտիրոջ գրադարանում կային Նաիրիի գրքերի լատիշերեն և ռուսերեն թարգմանությունները:

Ջրույցն ընթանում էր ուրախ, անկաշկանդ: Վերջում իր և մեր անունից շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: «Այս անմոռաց ժամերը, — ասաց նա, — մենք չենք մոռանա: Ես հրավիրում եմ Ձեզ գալ Հայաստան և լինել մեր տան պատվավոր հյուրը»:

Ճաշկերույթից հետո մեզ տարան քաղաքի տեսարժան վայրերը, այնուհետև՝ հյուրանոց: Շուտով Ռիգայից վերագարձանք Մոսկվա, մի քանի օր էլ մնացինք «Մոսկվա» հյուրանոցում:

Մեր գործերը վերջացրել էինք, պատրաստվում էինք նրեան վերադառնալ: Երբ իրերը տեղավորում էինք վագոնում, մեզ զարմացրին և հիացմունք պատճառեցին հարմարավետ, փափուկ և լավ կահավորված նոր վագոնները: Մեր վագոն-խցիկում երեքով էինք: Խոսում էինք, ծիծաղում: Երբ գնացքի մեկնելուն մնացել էր 10 րոպե, ներս մտավ մի իսկական Տորք Անգել (ինչպես հետո իմացանք, 165 կգ քաշ ունեւր): Երբ անձանոթը ներս մտավ, մենք երեքով, կարծես խոսքներս մեկ արած, բացականշեցինք՝ «պահ՜»: Նրա տեղը Անժիկի վերելում էր և նա սկսեց հեալով դասավորել իրերը: Երկուր և ուշադիր նայելուց հետո Նաիրին հարցրի. «Տեսնես ի՞նչ է ուտում, որ այսքան չաղացել է»: Նա իր սովորության և խառնվածքի համաձայն նորից բարձրաձայն ասաց. «Գա ինչ հարցնելու բան է, ինչ որ ուտում է, մնում է փորում»: Երբ գնացքը շարժվեց և ծանոթացանք, պարզ-

վեց, որ անվանի խոհարար է և շատ բարի մարդ: Նրան Հաստանից հրավիրել էին որպես խոհարարների խորհրդատու: Բավական ճանապարհ անցնելուց հետո սկսեցինք ճաշի նախապատրաստութուն:

Անժիկը ջանաոիրաբար սեղանին դրեց մեր պաշարը:

Անծանոթը իր հերթին սեղանին դրեց փառավոր խորտիկներ:

Ամեն ինչ առատ էր ու հաճելի: Մինչև Թբիլիսի ուտել-խմելով, մեր ուղեկցի հետաքրքիր պատմութունները լսելով հկանք:

Երբ նա իմացավ, որ իր հետ գնում է անվանի լաւնատ-տեղծ Նաիրի Զարչանը, սկսեց պատմել մեզ համար շատ նորութուններ: Պարզվեց, որ նա որպես գլխավոր խորհրդատու-խոհարար մասնակցել է Ղրիմի կոնֆերանսին:

Հասանք Թբիլիսի, մեզ հայտնեցին, որ այս վագոնը, որով մենք գնում էինք, մինչև Երևան չի գնալու, հետևաբար մենք պետք է տեղափոխվենք այլ վագոն: Պատճառը: Պատճառն այն էր, որ այդ նոր տիպի վագոնը դեպի Երևան տանող գիծը դեռ փորձարկված չէր, կարող էր վթար տեղի ունենալ: Պետք էր տեսնել Նաիրիի զայրույթը, բողոքի ձայնը:

Բացի այն, որ իրերով վագոնից վագոն տեղափոխվելը շատ տհաճ էր, այլևս չէինք ուզում այդ հարմար վագոնից իջնել: Նաիրիի հետ գնացինք կայարանապետի մոտ: Բարեբախտաբար պետք տեղում էր: Նաիրին ներկայացավ որպես գերագույն սովետի դեպուտատ և առանց վրդովմունքի թարցընելու՝ բողոքեց: Կայարանապետը ուղեց համոզել Նաիրիին, բայց դա հնարավոր բան չէր:

Նաիրին հաղթեց: Մենք մնացինք վագոնում և շարունակեցինք ճանապարհորդութունը դեպի Երևան:

Շարունակվեց մեր ուրախ ասել-խոսելը: Երևանի կայարանում Նաիրին, հատկապես Անժիկը, մեր հարևանին մնաս բարե ասելիս հրավիրեցին տուն, տալով նրան հասցին և հեռախոսի համարը:

Հաճելի մարդ էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Նրկար տարիներ ն. Զարյանը ղեկավարում էր խաղաղություն կոմիտեի հայկական բաժանմունքը: Հասարակական այդ պարտականությունը նա կատարում էր մեծ եռանդով և պատասխանատվությամբ: Նա, որպես կոմիտեի նախագահության անդամ, տեսնում էր, թե ինչպես, հաճախ իր առողջության հաշվին, մեծ աշխատանք է տանում ոչ միայն Հայաստանում, Սովետական Միությունում, այլև արտասահմանում: Նրա ելույթները Զեխոսլովակիայում, ԱՄՆ-ում և այլուր զարմանք և հիացմունք էին պատճառում: Ամենուրեք նա կրքոտ պաշտպանում էր խաղաղության սրբազան գործը: Բացի նախագահության նիստերից, շատ միջոցառումներ մենք միասին էինք անցկացնում: Դիմավորում էինք արտասահմանից եկած հյուրերին, հանդիպումներ կազմակերպում բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության հետ:

Այսպիսի միջոցառումներից մեկի ժամանակ կատարվեց մի զեպք, որը մոռանալ չեմ կարող:

Հունգարիայից հյուրերի էինք սպասում: Վաղօրոք ծաղկեփնջեր էին պատրաստել, մեկն էլ ինձ էին տվել նրանցից մեկին հանձնելու: Այդ հանձնարարությունն ինձ համար ծանր էր, քանի որ այդ հարցերում անշնորհ էմ: Գնացինք օդանավակայան, ինքնաթիռը վայրէջք կատարեց, հյուրերն իջան:

Նա չգիտեի ծաղկեփունջը ինչպես պետք է հանձնեմ: Բոլորն իրենց ծաղկեփնջերը հանձնեցին, մնացի ես: Նա էլ մոտեցա նրանցից մեկին և հանձնեցի: Դիմացինս բարի ժպիտով նայեց ինձ և ասաց.

— Ընկեր Դանիելյան, ես հյուր չեմ, ես ԱՕԿՍ-ի աշխատակիցներից եմ: Սառը բրտինքը պատեց մարմինս, բայց ինձ չկորցրի և ասացի.

— Գիտեմ, սիրելիս, գիտեմ, տվեցի, որ դու հանձնես: Հավատաց թե չէ, բայց ես թեթևություն զգացի:

Մի օր եղանք Մարտիրոս Սարյանի տանը: Մեզ դիմավորեց վարպետի կինը՝ տիկին Լուսիկը: Նախրիի այն հարցին,

թե որտեղ է Մարտիրոս Սերգեևիչը, կինը ժպտալով պատասխանեց. «Զգիտե՞ք՝ որտեղ կարող է լինել, վերելում է, արվեստանոցում»։ Բարձրացանք տան հրկրորդ հարկում գանրվող արվեստանոցը։ Մարտիրոս Սերգեևիչը այնքան էր տարված աշխատանքով, որ մեզ չնկատեց։ Մենք լուռ կանգնեցինք, իսկ նա վրձինը ձեռքին մի քանի բայլ հետ էր գնում։ Նայում գունչերին և նորից մոտենում կտավին և ուղղումներ անում։ Նրան խանգարողը միայն Նաիրին կարող էր լինել և խանգարեց, բարձր ձայնով բարեկելով։

Մարտիրոս Սարյանը բարի ժպտով մոտեցավ մեզ, բարեկեց և մեր խնդրանքով սկսեց բացատրություններ տալ արվեստանոցում եղած նկարների մասին։ Իսկ դրանք շատ էին, մի քանի տասնյակ։

Պատկերասրահը նայելուց հետո Մարտիրոս Սերգեևիչի հետ իջանք սեղանատուն։ Մեզ սուրճ և միրգ հյուրասիրեցին։ Մի գավաթ սուրճ և մի քանի ժամ գրույց։ Զրույցի թեման բազմազան էր. հայ ժողովրդի անցյալը, ներկան, արվեստը, գրականությունը, երաժշտությունը, գիտությունը։ Մարտիրոս Սերգեևիչը մեծ հաճույքով և հետաքրքիր պատմում էր անցած ուղու մասին, և մենք հափշտակված լսում էինք։ Շատ հետաքրքիր դեպքեր պատմեց իր մանկությունից, երիտասարդական տարիներից, ճանապարհորդություններից, հայ անվանի գործիչների հետ ունեցած հանդիպումներից և այլն։ Ես այն տպավորությունն ստացա, որ հիշողությունները բոլորելիս վարպետը ինքն էլ հաճույք է ստանում։

Ես հափշտակված լսում էի։ Նաիրին հաճախ հարցեր էր տալիս և շեղում նրան։ Ինչեր ասես, որ չի տեսել, ուր ասես, որ չի գնացել, ինչ գրկանքներ ասես, որ չի կրել։ Շատ սիրով և ջերմությամբ էր հիշում հորը։

— Զարմանալի աշխատասեր էր,— ասաց վարպետը, նույնիսկ երբ հիվանդ էր լինում, չէր պառկում, աշխատում էր։

— Դուք էլ եք աշխատասեր,— ընդհատեց նրան Նաիրին,— ինչքան եկել եմ, այստեղ Ձեզ աշխատելիս եմ տեսել։

— Աշխատել չսիրող մարդը,— ասաց վարպետը,— ծուլ մարդը ապրելու իրավունք չունի։ Մեր բազմամեղամ ընտա-

նիքի միակ կերակրողը իմ հայրն էր: Նա ոչ միայն աշխատասեր էր, այլև բարի, անսահման բարի:

Այնուհետև Մարտիրոս Սերգեևիչը հիշելով իր մանկությունը, պատմեց, թե ինչպես օրնիրուն ընկնում էր գույնզ-գույն թիթեռների հետևից:

Պատմեց նաև իր ճանապարհորդություններից դեպի Եփսոս, Պարսկաստան, Պոլիս և ամեն մի երկրի մասին խոսելիս հետաքրքիր օրինակներ էր բերում: Եւ շունչս պահած լսում էի և վախենում, որ Նաիրին կընդհատի նրան:

— Այն ժամանակ (1911) այնքան էլ հեշտ չէր այդքան երկրներ ման գալ, — ասում էր նա, — դրա համար հարկավոր էին միջոցներ, իսկ իմ միջոցները շատ սուղ էին: Փոխադրամիջոցներ էլ չկային, ճանապարհորդում էինք մեծ մասամբ էջի, ձիու կամ ուղտի վրա նստած:

— Հիշում եմ, թե ինչպես մի անգամ ձիուց վայր ընկա և բարեբախտաբար մնացի անվնաս: Բոլոր դեպքերում էջի կամ ձիու վրա նստած ես ինձ ավելի լավ էի զգում, քան ուղտի:

Եւ զարմացա, որ Մարտիրոս Սերգեևիչը այդ կարծիքին էր: Հիշում եմ, երբ փոքր էի, Կաղզվանից մեր գյուղը ուղտերով էին միրգ բերում, բոլորն ուրախանում էին, որովհետեւ միրգը լավ վիճակում էր տեղ հասնում: Երբ այդ մասին ասացի վարպետին, նա ժպտալով պատասխանեց, թե ուղտը շատ է օրորվում, խնոցու պես հարում է և մարդ չի դիմանում: Չնայած այս դժվարություններին, — ասաց նա, — ես մեծ հաճույք էի ստանում, դիտելով բնությունը, ման գալով բնության գրկում: Նա մի առանձին հաճույքով շարունակ կրկնում էր՝ բնությունը նկարչի ամենալավ բարեկամն է, ամենալավ ներշնչողը:

Խոսելով մտավորականների մասին, նա առանձին սիրով հիշում էր Ն. Մառին, Թորոս Թորամանյանին, Հովսեփ Օրբելուն, Գարեգին Լեոնյանին: Մեր ժողովրդի՝ հայ ժողովրդի պարծանքներն են նրանք: Մեր մշակութային արժեքների պահպանման գործում մենք շատ բանով ենք պարտական այդ մարդկանց: Պատմեց, թե ինչ դժվարությամբ է գնացել Անի: Մեր հարցասիրությունը նրան ոգևորում էր և նա պատմում էր ժպիտը դեմքին ու հաճույքով:

Նաիրին հարցրեց,— Մարտիրոս Սերգեևիչ, երբ Զեզ հարցնելու լինեն այդ երկարատև շրջագայությունների ընթացքում հաճելի պահե՞րն են շատ, թե...

Նաիրին դեռ չէր ավարտել իր խոսքը, վարպետը պատասխանեց.

— Չարչարանքը, դժվարությունները, զրկանքները շատ-շատ էին: Բայց քանի որ ես սիրում էի իմ գործը, մանավանդ նաև որ երիտասարդ էի, հեշտությամբ էի տանում բոլոր դժվարությունները:

— Այդ դժվարությունները վաղուց մոռացել եմ, արդեն հուշ են դարձել: Միայն մի դեպք, ինձ համար դժբախտ մի դեպք չեմ մոռացել և չեմ մոռանա: Փարիզից վերադառնալիս մի քանի տասնյակ կտավներ, որոնց վրա շատ էի աշխատել, հանձնեցի ուղեբեռը, որը պետք է դարձով: Յովինչ: Նավում հրդեհ է բռնկվում և ամբողջովին այրվում են իմ կտավները: Զեզանից ոչ ոք չի կարող պատկերացնել իմ ապրումները, իմ այն ժամանակվա վիշտը: Դա մոռանալու բան չէ: Մեկ էլ չեմ կարողանում մոռանալ հայ գաղթականների ծանր, ողբալի վիճակը: Էջմիածնի վանքի պատերի տակ անօգնական ընկած կանայք, երեխաներ: Սովը և համահարակը հնձում էին մարդկանց, իմ աչքի առջև մայրերից մեկը կորցրել էր հինգ երեխաներին:

Նաիրին և ես, որ ակնհատեա ենք եղել այդ բոլորին, մի առանձին ցավով էինք հիշում այդ բոլորը:

ԷԶՐԱՍ ՀԱՍՐԱԹՅԱՆԻ ՄՈՏ

* * *

Մոսկվայում անվանի ֆիզիոլոգ էզրաս Հասրաթյանը մեզ ճաշի էր հրավիրել: Ես և Արտո Նղիադարյանը շուտ էինք գնացել և զրուցում էինք արտասահմանից նոր վերադարձած էզրասի հետ: Ժաննան՝ էզրասի կինը, ճաշի պատրաստություն էր տեսնում, մեկ-մեկ էլ ականջ դնում մեր խոսակցությունը: Սովորաբար Հայաստանից եկողներին էզրասը հարցաքննում էր գատական բննիչի պես. ինչ նոր կառույցներ կան, ինչպես են իր ծանոթներն ու բարեկամները, ինչ նոր

գրքեր են լույս տեսել, այսինչ կառույցը ավարտվել է, թե ոչ և այլն: Վերջում տալիս էր գրքերի մի ցուցակ, որը ես պետք է նրեանից ուղարկեի: Ճաշի ժամը մոտենում էր, Նաիրին դեռ չկար:

— Ոչինչ,— ասաց էգրասը,— մի փոքր էլ կսպասենք, եթե չեկավ, կճաշենք: Հենց այդ ժամանակ լավեց դռան գանգը: Ներս մտավ Նաիրին՝ վրդովված:

Էգրասի այն հարցին, թե ինչ է պատահել, իր սովորաբան համաձայն, բարձր ձայնով ասաց. «Էլ ինչ պիտի պատահի, տրուկյուռսի մեջ մի սիրուն աղջիկ տեսա, մոտեցա որ սիրաբանեմ, նա վեր կացավ, տեղը ղիջելով ինձ՝ ասաց. «Հորեղբայր, նստեք»:

Մենք ուրախ ծիծաղեցինք:

— Ուրախ եղիր, որ հորեղբայր է ասել,— ասաց էգրասը,— նա կարող էր նաև պապիկ ասել: Մենք նորից ծիծաղեցինք:

Ճաշում և զրուցում էինք: Երբ Նաիրիի կենացը խմեցինք, էգրասը շատ գովեց նրան (նրանք մանկության ընկերներ էին) և արտասանեց նրա բանաստեղծություններից. իմիջիայլոց էգրասը արտասանելու զարմանալի սեր ուներ և զարմանալի հիշողություն: Հաճախ, առանց առիթի արտասանում էր Դուրյանի, Տերչանի, Սիամանթուի, Վարուժանի, Զարենցի, Սեակի, Շիրազի, Հր. Հովհաննիսյանի և ուրիշների բանաստեղծությունները:

Եվ երբ վերջացնում էր, հարցնում էր. «Եյս կտորը լավ է, չէ»: Էգրասը հարցրեց Նաիրիին, թե ինչ է գրում և ինչ ծրագրեր ունի: Նաիրին, առանց երկար մտածելու, պատասխանեց.

— Ծրագրում եմ և պետք է գրեմ մեր սերնդի պատմությունը: Էգրասը, Արսո Նզիազարյանը ոգևորվեցին:

Տանտերը միաժամանակ ասաց. «Շատ լավ ես մտածել, Նաիրի ջան, մեր սերնդի պատմությունը պետք է գրել: Բաղմաթիվ շարչարանքներ և զժբախտություններ տեսած այս սերունդը արժանի է գրան»: Երկար նստեցինք: Նաիրին երգեց: Երգը հուզեց բոլորիս, առավ իր մեջ: Բանաստեղծի հոգին լի էր կարոտներով և սպասումներով: Նրա երգի մեջ թախիժ ու արամություն կար:

Ուշ երեկոյան վերադարձանք հյուրանոց:

Ն. Զարչանը և Հր. Քոչարը պժտվել էին: Բայց ամեն կերպ աշխատում էի, որ նրանց վեճը շխտանա, որովհետեւ երկուսն էլ մեր ժողովրդին նվիրված մարդիկ էին, երկուսի ձայնն էլ վազուց՝ լսելի էր երկրի սահմաններից դուրս: Երկար ժամանակ մտածում էի, հաշտեցման կըբ գտնել, այդ մասին խորհրդակցելով կնոջս՝ Սաթիկի հետ. որոշեցինք երկուսին էլ հրավիրել՝ հարիսա ուտելու: Սաթիկը հարիսա եփելու վարպետ էր: Ելքը մոտավորապես գտել էինք, բայց երբ մեկը խմանար, որ մյուսն էլ է հրավիրված, չէր գա: Որոշեցինք հրավիրել այնպես, որ այդ մասին նրանք չիմանան: Այդպես էլ արինք: Սկզբում Սաթիկը զանգահարեց Նաիրիին և պաշտանավորվեց առավոտյան ժամը 10-ին: Հետո ես զանգահարեցի Քոչարին և հրավիրեցի ժամը 10 անց կեսին: Մեր մտահղացումը հիանալի արդյունք տվեց: Նաիրին եկավ՝ բացատկանչելով. «Երեկվանից ախորժակ եմ պահել Սաթիկի եփած հարիսայի համար»:

Սաթիկը մոտեցավ Նաիրիին, բարեկց և ասաց. «Նստեք մի քիչ նարդի խաղացեք, մինչև սեղանը պատրաստեմ»: Մենք նստեցինք նարդի խաղալու, Սաթիկը կամաց-կամաց սեղանի վրա ամաններ և ուտելիք էր շարում:

Նաիրիի մտքով էլ չէր անցնում, որ այդ զանգահաշար-ժովիչունը ժամանակ շահելու համար է: Ես մտադրով էի և տարվում էի. դա ուրախացնում էր ե՛ւ ինձ ե՛ւ Նաիրիին: Ծնմտածում էի ոչ թե խաղը տանելու մասին, այլ՝ թե ինչպես Քոչարն ու Նաիրին կհանդիպեն երես առ երես: Մենք խաղը վերջացնելու վրա էինք, երբ ներս մտավ Քոչարը: Բնդհանուր բարեկ, բարի լույս ասաց ոչ իր սովորական ժպիտով: Սաթիկը ուրախ դիմավորեց: Ես տազնապի մեջ էի, վախենում էի հետ գաճնար ու գնար Ասատուր Ասատրյանի մոտ (կնոջ՝ քրոջ ամուսինը, որի հետ ապրում էինք նույն միջանցքում): Բայց նա մոտեցավ մեզ՝ ասելով. «Դուք ինչ խաղալ գիտեք, որ իզուր Նաիրիին էլ զբաղեցնում եք»: Ես ազատ շունչ քաշեցի, փոթորիկ չէր սպասվում: «Հրաչ ջան, ես համարյա տարվել եմ, Նաիրին չորս է, ես զրո, ընդունելով իմ պարտութունը, տեղս զիջում եմ քեզ, իմ վրեժը դու առ»: Այդ ասելով վերկացա: Քոչարը առանց առարկելու նստեց և

երկուսով էլ լուռ սկսեցին խաղալ: Են և Սաթիկը իրար էինք նայում, սրտանց ուրախանում: Մի փոքր խաղալուց հետո սկսեցին նաև զրույցել: Դա մեզ ավելի ուրախացրեց: Երբ սեղանը սլաքաբաժնի էր, ես մոտեցա նրանց և ասացի. «Հացը դրած, բանն անիծած, վեր կացեք»: Նախիրն ասաց. «Սպասի, սպասի, էս պարծենկոտին մի լավ դաս տամ»: Նրա այդ արտահայտությունը արդեն մտերմությունը վերականգնելու նշան էր: Սաթիկը հրավիրեց սեղանի մոտ: Մոռանալ չեմ կարող այդ օրը, նրանք ախորժակով ուտում էին հարիսան, հաճույքով զրուցում: Գիտեի, որ նրանք երկուսն էլ իրար սիրում են ու երկուսն էլ առիթ էին փնտրել այդպիսի հանդիպման:

Շատ ուրախացա և ինչպես շուրախանայի: Ծաշից հետո երկար, շատ երկար շարունակեցինք զրույցել. նրանք երկուսն էլ ծարավի էին հանդիպման:

Քոչարի մահը Նախիրն ծանր տարավ: Հաճախ էր նա ինձ գանգահարում և միասին դնում էինք գերեզմանոց: Եվ ամեն անգամ հուզմունքով համբուրում էր Քոչարի շիրմաքարը՝ սրբելով աչքերը:

Գոհ էր, որ խոսված չմեռավ Քոչարը:

Հրաչյա Քոչարի մասին Նախիրն զրեց.

«Նրա մեջ կար ավելի գունեղ և զսրավոր մի բան: Դա կենդանի մարդն էր, կնդանի Հրաչյան իր անսպառ ու սրամիտ պատմություններով, իր երփնավառ խոսքով, իր անկոտրում ոգով: Նա գիտեր ծիծաղել ու ծիծաղեցնել, խաբարդանել ու համոզել, ստատել ու թեավորել:

Փայլուն մարդ էր»:

ՀԱՃԵԼԻ ՎՐԻՊԱԿ

Հաճելի միայակ կարող է լինել: Կարող է: Առավոտ շուտ՝ 1950 թվականի մայիսի 3-ին ես թերթում էի գրականագետ Ասատուր Ասատրյանի կազմած դասագրքի ազդորինակը: Ասատրյանը դասագրքում գետեղել էր հեղինակների համառոտ կենսագրությունը:

Նախիրի Զարյանի կենսագրության մեջ սպրդել էր մի սը-

խալ: Ինչպէս հայտնի է, ն. Զարյանը ծնվել էր 1900 թվականին, իսկ դատագրքում տպագրված էր 1915 թվական:

Անմիջապէս զանգահարեցի տուն՝ նախրիին:

Լուսինայի մեջ լսեցի նրա բավական դժգոհ ձայնը: Գտնշանակում էր կամ քնից արթնացրի, կամ էլ պարտաւում էր՝ խանդարեցի: Բայց երբ իմացաւ՝ ես եմ անհանգստացնողը, փափկեց և միաժամանակ զարմացաւ:

— Նախրի, գիտե՞ս, — տաացի, — զատագրքում տպագրւած քո կենսագրութեան մեջ կոպիտ սխալ է գնացել: Ծննդյանդ թիվը 1900-ի փոխարեն տրվել է 1915: Այս որ լսեց՝ քահ-քահ ծիծաղեց և տաաց:

— Այգայիսի հաճելի վրիպակի կյանքում չեմ հանդիպել, — լսիր, սիրելիս, հանկարծ էջը չփոխեք, և մանավանդ վրիպակների ցանկում չտար: Այդ լավ նշան է, կարող է պատահի 15 տարի ուշ մեռնեմ, բայց զրանից, — կատակեց նա, — կանայք կիմանան ես շատ ջահել եմ: Ատապ և նորից բարձր ծիծաղեց:

Երբ ավարտել էինք մեր խոսակցութեանը, Լուսինայը դրնելուց առաջ նորից հրամայական տնոյլ տաաց.

— Պահանջս չմոռանաս, վրիպակին վրիպակ տալու կարիք չկա:

Չնայած նրա խիստ պահանջին, կարգադրեցի այդ էջը նորից շարել և տպագրել:

Դատադիրը լույս տեսնելուց հետո երբ կարգացել և տեսել էր, որ ծննդյան թիվն ուղղված է, զանգահարեց և կատակով տաաց. — չթողեցիր գոնե ծննդյան թիվով ջահել լինեմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դեպի գյուղ՝ դեպի կյանք	3
«Բուշեկյան դրոշմը» լրագրի ծնունդը	9
Դեպի Թալին	11
Դեպի դործ	13
Անգրագիտության վերացումը հարվածային ճակատ է	16
Տեմպերի տախտակ	17
Սիրված բանաստեղծը, մեծ քաղաքացին (Ալ. Իսահակյան)	18
Էջեր օրագրանշումներից	24
Մեծ վիպասանը (Դ. Դմիրճյան)	29
Բոցաշունչ բանաստեղծը (Նաիրի Զարյան)	44
Նվեր «Ի հիշատակ բարի օրերի»	46
Հովհ. Բաղրամյանի մոտ	47
Հայկական ՍՍՀ-ի խաղաղության կոմիտեի նախագահ	51
Էդրաս Հասրաբյանի մոտ	54
Հաճելի վրիպակ	57

ԽճԼԱՆՈՍ ՀՈՎԱԿԻՄԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՊԱՏԱՌԻՆՆԵՐ ՀՈՒՇՆԵՐԻՑ

Хнканос Овакимович Даниелян
ОТРЫВКИ ИЗ ВОСПОМИНАНИЙ

(На армянском языке)
Ереван «Айастан» 1988

Խմբագիր՝ Լ. Ե. Բեկոյան
Նկարիչ՝ Հ. Մ. Մատուռյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ռ. Ս. Ասատուրյան
Վերատուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Հայրապետյան

ИБ № 6131

Հանձնված է շարվածքի՝ 24. 12. 1987 թ.:

Ստորագրված է տպագրության՝ 22. 06. 1988 թ.:

ՎՅ 01944: Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Թուղթ տպագրական № 1: Տառատե-
սակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 3,15 պլմ. տպագր.
մամ., 3,36 պլմ. ներկ. թերթ, 2,58 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 2500:
Պատվեր՝ 311: Գինը՝ 15 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ավ. Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան Տեղյան 44:


Типография № 2 Госкомитета Арм. ССР по делам издательств, по-
лиграфии и книжной торговли, Ереван, ул. Теряна, 44.

ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0261239

15 400.



98
7